4329

2004

382
5

# ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Որ ըրաւ Թաշառ անուանով երևելի Ֆռանսըզ Ճեզ-վիթմը, Լուիճի Չորեքտասաներորդ Ֆռանսայի թագաւորին հրամանաւը դէպ 'ի Շիամ՝ որ է մէկ երևելի թագաւորութիւնը ։

Արևելեան Հինտիստանին մէջ ։

Յաշխարհաբառ հասարակաց 'ի կանոնաւոր պատմա-գրաց, Աշխարհագրութեան աշակերտաց Տն Մխիթարայ Մեծի Աբբայի ։

'Ի խնդրոյ և յարդեանց Ընկերութեան Արշարունեաց ։

'Ի ՎԷՆԷՏԻԿ

'Ի Վանս Սրբոյն Ղազարու

1815

Армянскаго Лазаревыхъ Института Восточныхъ языковъ
Библиотека Лазаревскаго Института Восточныхъ Языковъ

ՊԵՏ. ԱՆՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиоте
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясник
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
29008-63

# ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

## ԴԷՊԻ ՇԻԱՄ

Շատ ճամբորդութիւններ կայ՝ որ ըրեր են զանազան մարդիկներ դէպ 'ի Շիամի թագաւորութիւնը, բայց ասոնց պատմութիւններուն մէջէն է անուանին ու յարգ էխօփէպար ունեցողը ամենուն առջևը, աս Տիւզլիթին ըրած ճամբորդութեան պատմութիւնէ, անոր համար մենք ալ ընտրեցինք ասիկայ ոչ միայն ճշմարտութեան համար, այլև շատ զուարճալի դիպուածներ մէջը ըլլալուն համար:

Երբոր հաստատուեցաւ մէկ ընկերութիւն մը ամենէն գիտութեց՝ Փարէզ Ֆռանսայի մայրաքաղաքին մէջը, առջի ջանքը աս ընկերութեան եղաւ՝ որ Ֆռանսայի թագաւորին պաշտպանութեան տակը ըլլալով, ըսկսին նոր նոր քննութիւններ ընել հեռու քաղաքներուն մէջ, որպէս զի ասով կարենան դիւրաւ սրբագրել ան ամենէն սխալները՝ որ մինչև ան ատենը կըգտնուէր աշխարհացոյց թըղթերուն մէջը, դիւրացընել նաւարկութիւը ու կատարելագործել աստղաբաշ-

խութիւնը · աս պատճառաւ ընկերութեան մէջ եղած ուսումնականները խրկըվեցան Տանիմառքա, Ինկիլթեռա, Ափրիկէի ու Ամերիգայի կղզիները, Չինումաչինն ալ ալ ։ Ու որովհետեւ շատ հարկաւոր էր նաեւ դէպ 'ի Արեւելեան Հինտիստան մարդ խրկելը, անոր համար կըսպասէին մէկ յաջող առթիմը՝ իրենց ուզածը առաջ տանելու համար ։

1682ին վերջերը եկան Փռանսա երկու Հինտիստանցի իշխաններ որ խրկեր էր Սիամի թագաւորը շատ հարուստ ընծաներով Փռանսըզի թագաւորին, ան դեսպանին էլչին տեղը՝ որ Սիամի թագաւորը Փռանսա խրկեր էր առաջ, և Ճամբան դալնիքէն ընկղմեր էր ծովին մէջ նաւերնին խորտակելով [illegible] ըլլալով ։ Լուիճի 14երորդը՝ որ ան ատենվան Փռանսայի թագաւորն էր, տեսնալով այսպիսի սէրը Հինտիստանցի թագաւորին, սիրտը վառվեցաւ՝ որ այսպիսի աղէկ առիթը ձեռքէ չիկորսընցընելով՝ ջանայ օգուտ ընել գիտութեանց ու քարոզել այս անտեղվանքը քրիստոնէութեան ճշմարիտ հաւատքը, վասն զի հոնտեղը ամէնքը կռապաշտ էին ։ Աստի շուտմը հրաման ելաւ թագաւորէն՝ որ պատրաստվի ճամբորդութեան հարկաւոր եղած աշխարհացու-

ցի

ցի թուղթերը ու ամէն աստղաբաշխու-
թե ու մաթիմաթիգական գործիքնե-
րը․ թագաւորը ընտրեց Ոումօն աս-
պետը՝ որ ըլլայ իրեն դեսպանը Ո խամի
թագաւորին քով, և որոնք որ հետը պի-
տոր երթայիննէ՝ ամէնուն իրենց ե-
կամուտները չէլէրնէրը կալպեց, որ էին
եօթը Ոիզմիթ՝ ամէնքը վարպետ մա-
թիմաթիգական գիտութիւններու մէջ։
Լորբոր ամէն հարկաւոր պատրաստու-
թիւնները տեսնըլէյաննէ, գայցին աս ամ-
էն ճամբորդները Պրէսթ ըսված ֆը-
ռանսայի մէկ նաւահանգիստը, ու-
կից մտան նաւերուն մէջը՝ որոց մէկը
40 թօփ կըքաշէր, մէկալնալ 30։ Պրէսթ
նաւահանգիստէն մինչև Պոլուսի բարե-
յուսոյ ըսված տեղը առանց մէկ մեծ
նեղութիմը քաշելու հասան յաջողութ̃ե։
ատոնք թէպէտ և անցան այրեցած գօ-
տիին տակէն, ուրտեղ սաստիկ տաք ըլ-
լալուն պատճառաւ՝ անկից անցնօղները
չայ կըլլային, (ինչպէս իրեք չորս ամիս
ատոնցմէ առաջ անկից անցնելնիքէն մէկ
ընկերութիմը նաւերու՝ մարդիկներուն
չորս փային իրեքը մեռեր էին), բայց ա-
տոնց անցնելու ատենը՝ ինչպէս որ կը-
սէ Փաշաւը այնչափ տաք էր, որչափ որ
տաք կըլլայ Ֆռանսայի մէջ ամառուան

էն տաք ատենը ։ Մօտիկ ժամրուն մէջ տեսան մէկ քանի նոր նոր երևոյթներ՝ որ մեր աստիճաններուն տակը կամ հէչ կամ շատ քիչ անգամ կերևնայ , և են աս հետևեալները ։

Մարտ ամսուն մէջ տեսան երկինքին դէպ 'ի հարաւային կողմը ան երևոյթը՝ որ իրեն ձևին նայելով կըսվի աչք եզան կամ նոխազի [illegible] ։ անատեղվանքը երբոր կը տեսնըվի երկինքին վրայ աս երևոյթը , անտեղի մարգիկները կըսեն թէ նշան է որ սաստիկ փոթորիկ ու կարկուտ կըլլայ ։ Աս երևոյթը է մէկ կլօր ու թանձր ամպ մը՝ անմիջապէս արեգակին առջևը , ու աս ամպին վրայ կերևնան ծիրանի գօտիին վրայ եղած ամմէն գոյները , և նոյն գոյները աս ամպին վրայ աւելի գեղեցիկ ու կենդանի կերևնան քան թէ ծիրանի գօտիին վրայ ։ և պատճառը ասոր այսպէս ըլլալուն , կերևնայ որ նոյն ամպը չորս դիէն պատած է շատ թանձր ու մութ ամպերով ։ Աշխարը չաւտար անտեղի մարգիկներուն խօսքին որ կըսեն թէ նշան է գէշ հաւայ ըլլալու , գիտեմ ինքը երկու անգամ տեսաւ աս երևոյթը , և անկից ետև չաբաթներով գեղեցիկ ու պայծառ հաւաներ եղան ։

Նոյն

՚Նոյն Թամաշառը կըստորագրէ մէկ ու-
րիշ երևոյթ մընալ՝ որ տեսաւ հասարա-
կածին ու արևադարձ այծեղջեր մէջ
տեղը. և աս երևոյթին՝ անտեղացի
լեզուով կսեն վիշապ ջրոց, տաճկերէն
խօրթում. էն առաջ վերը տեսաւ մէկ
թանձր ու սև ամպմը, որուն մէկ ծայ-
րը սաստիկ քամիովմը սկսաւ վար երկըն-
նալ, և որչափ որ վար կինջնարնէ՝ կը-
ձևանար մէկ կլօր հաստը սիւնմը, և
այսպէս ինջնալով ինջնալով եկաւ կըպաւ
մէկ ծայրը ծովու երեսին վրայ, մէկալ
ծայր նալ կըպած էր վերի ամպին հետ.
ան տեղին չորս կողմերը՝ ուր ինջեր էր
աս խօրթումին ծայրը, կարծես թէ
եփ եղած ջուրխմըպես կեռար: Աս ե-
րևոյթը այնչափ կըդիմանայ որչափ որ
քամին կըտևէ նէ. խօրթումը երբոր կը-
պատռըվի կ՚իջ նաւուն կայմերէն վրէն-
ներէն՝ որ երբեմն սաստիկ արագ քալելու
առեն կերթայ մէջը կըմտնայ, և կամ
քամին միակերպ շարժմունքը խափա-
նելով, որ կըլլայ շատ թօփեր ետևէ ետև
նետելով՝ շուտմը կըցըրվի խօրթումը ու
որչափ ջուր կայ մէջընէ մէկէն ՚ի մէկ
վար կիյնայ: Այսպիսի դիպուածքը շատ
վտանգաւոր է նաւերու, մէյմը որ նա-
ւը՝ թէ որ սաստիկ արագ քալելով մըտ-

նայ խորթումին մէջը ու պատըռւտէ ան ամպերընէ, բոլոր ջուրը որ մինչև վեր գացեր էրնէ՝ կուգայ կիյնայ յանկարծակի նաւուն վրայ ու կրնայ ընկըղմել նաւը ։ Երկ̃դ. ան սաստիկ մըրըրիկ հանօղ քամին՝ որ աս խորթումը աստիս անդին կըտանի, կըրնայ բոլոր նաւուն կայմերը ջարդուբուրդ ընել կամ վեր վերցընել նաւը, անոր համար միշտ ըզգուշանալու է հեռու կենալ այսպիսի վտանգաւոր տեղերէ ։ Անտեղվանքը եղած խորթումներուն կըլորութեան չափը հեռուէն որոշիկ կերևնայ, բայց թէ որ քովէն նայվինէ շատ մեծ են ։ Աւաշաւը կըպատմէ թէ իր աչքովը տեսերէ իրեք հատ՝ մէկ փոշտովի մէնզիլի հեռաւորութիւն, որուն կըլորութեան տրամագիծին չափը էր 100 ոտք ։

Ասկից զատ տեսան ուրիշ երևոյթներ ալ՝ որ կըսվին ջրմուղներ Ճալըրաճաներ իրենց ձևերուն պատճառաւ, մէն գն շատ նմանութիւն ունին ջրմուղի ։ աս երևոյթները արեգակը ելլալու կամ մտնալու ատենները կերևնան, և միշտ արեգական մօտիկները կըպըտըտին և են երկայն ու թանձր ամպեր, և չորս կողմէն պատած ուրիշ լուսաւոր ու թափանցիկ ամպերով ։ Ասանք մէկալ խորթու-

մին

մինչս վար չեն իջնար , այլ կըխառնը . վրին մէկզմէկու հետ ու երկայն ժամանակ կըկենան , և նոյն ատենները միշտ անձրև ու փոթորիկ կըլլայ և բոլոր ծովը սաստիկ կըփրփրի . աս երևոյթը մէկենիմէկ չիցըրվիր մէկալ խօրթութիւներունպէս , այլ կամաց կամաց կըոչնչանայ : Աս կողմերը լուսնի լոյսէն ձևացած ծիրանի գօտիներուն գոյնը աւելի պայծառ են քան՝ որ կըլլայ մեր կլիմաներուն տակ : Երբոր սաստիկ քամի կըլլայ անտեղի ծովերուն երեսը , ու քամիով բարակ ջուրեր վեր կըցաթկենէ՝ սքանչելի ծիրանիգօտիներ կըձևացընէ արեգակը ծովուն երեսին վրայ , կամ երկու ալիք [illegible] երբոր կըզարնըվին մէկզմէկունէ , անոնցմէ վեր ցաթկած ջուրերուն կաթիլներով աղուոր աղուոր ծիրանիգօտիներ կերևնայ . թէ որ մէկ բարձր տեղէ նայվինէ՝ աս ծիրանիգօտիներուն ամմէննալ թերս կերևնան . երբեմն կըպատահի որ այսպիսի ատեն վերէն մէկ ամպմը կանցնի ու կըսկըսի անձրևելնէ՝ անատենը աս անձրևէն ալ ծիրանիգօտի կըձևանայ , և որովհետև ըսինք թէ վարի ծիրանիգօտիները թերս կերևնան՝ հարկաւ կըհետևի որ վերի ծիրանիգօտիներուն ծայրերը կուգայ կը-

միանայ վարի ծիրանիգօտիներուն մէ-
կուն ծայրին հետը, և այսպէս կը ձևա-
նայ գրեթէ կլօր ծիրանիգօտի մը ։

Աս երևոյթները տեսնըվեցան երկին-
քին վրայ ու օդին մէջ, բայց ծովուն ե-
րեսին վրայ տեսան մէկ քանի երևոյթ-
ներ՝ որ մեր ծովերուն վրայ քիչ ան-
գամ կերևնայ ։ Ասոնք շատ անգամ կը-
տեսնային բռնկած կրակներ՝ որ հեռը-
վանց տեսնելով, վառած ջահեր ճրագա-
ներ կը կարծէին. երբոր կը դադրէր սաս-
տիկ մրրրիկները, կը տեսնըվէր անհա-
մար կրակներ լեցուն ձևով որ կուգային
կը կըպչէին նաւին կայմերուն ուէրէն փէ-
րէկներուն վրայ. շատ անգամ կը տեսնա-
յին գիշերը՝ որ բոլոր ծովին երեսը կը-
գոցվէր կրակի կայծերով. աս երևոյթը
ամենուն աղւոր կերևնար երբոր քիչ մը
ալիք կըլլար ծովուն երեսը ու ալիքները
մէկզմէկու կըզարնըվէին նէ. շատ գե-
ղեցիկ տեսիլք մը կերևնար՝ երբոր կը-
նայէին նաւուն ետևէն, վերէմ երբոր
նաւը կը քալէր նէ սաստիկ արագութե,
ետևը թողուցած ճամբան բոլոր լուսա-
ւորված կըմնար, և կարծես թէ նաւը
կը քալէր մէկ կրակէ գետի մը մէջէն, և
երբոր ծովուն մէջը բան մը կը ձգէին նէ՝
ամէն մէր ցաթկած ջուրերուն կաթիլ-
նե-

ները ու ինկած բանին տեղը կըփայլէր կածկլտուկներով ։

Աս երևոյթին պատճառը Ովաշաւին լուածին կեօրէ է նոյն խակ ծովու ջուրին բնութիւը. պէրէմ աս ջուրին մէջ շատ ըլլալով բորակ Հէ-Հէրէլէ ըսուած դիւրավառ աղը, և մանաւանդ ան նիւթը՝ որ բնալոյծները կըգործածեն Փոսֆորոս շինելու, անոր համար ասոնք երբոր կըշարժինան մէկէն կըբռնկին, և ասկից կըհետևինաև կածկլտուկ հանելը. այսպիսի ջուրը թէպտ և քիչ շարժում պիլէ ունենայ՝ շուտովմը կըրակ կըհանէ ։ Շատ անգամ փորձերեն որ մէկ երկայն չուվանմը ձըգելով ծովուն մէջ ու քիչմը շարժելով անհամար կայծեր ցաթկերեն, և ան կայծերուն փայլունութիւը էր այնպէս՝ ինչպս որ կայծոռիկը —Բէէշ պէօձէէն կըփայլի ամառ գիշերները ։ Աս փայլուն կայծերը չէթէ, միայն երբոր ծովը կըշարժէրնէ կերևնար, այլ համդարտութե անենալ կերևնայ եղեր դէպ 'ի հասարակածին մօտիկները՝ արեգակը մըտնալէն ետև, և ասոնք հեռըվանց կերևնային մէկ մըթնշաղ ջահիմըպս, որ ետևէ ետև կելլային ծովլին մէջէն վառուած ու շուտմը կըմարէին ։ Նաւուն մէջ եղած մաթիմաթիգոսները աս ե-

րնկութին ուրիշ պատճառ չիկրցան տալ , բայց եթէ ըսին՝ թէ, ասիկա կըպատճառի սաստիկ արեգակին տաքութենէն , որ բոլոր ցորեկը ծովուն վրայ ըլլալով լըցուցերէ վանի տաքութը , անոր համար գիշերը նոյն տաքութենէն կըբռնկին ծովուն մէջ եղած դիւրավառ աղերը :

Ըս տեսած փայլուն կայծերէն ու կրակներէն պատ՝ տեսան ուրիշ կրակներ ալ ծովուն հարդարտութե ատենը՝ որ նաւին մէջ եղած մաթիմաթիգոսները չիկրցան ինչպէս պէտք է պատճառը տալ . ասոնք ալ ջրի տեսնըւած կըրակներուն նման չէին , վասն զի առջինները բռնկածնինպէս կըմարէին , իսկ ասոնք բռնկելէն ետև շատ ատեն վառած կըմընային , և աս վերջի երևցածներուն ամմէնուն ձևը տարբեր տարբեր էին . կար կլոր , հաւկըթաձև , երկայն են . կլօրները մեծ էին մէկ ոտք ու կէս տրամագիծով , և վառած կրակները նաւուն քովերէն կուգային կանցնէին . ասոնք այնչափ փայլուն էին՝ որ կերևնային 200 քայլ [illegible] հեռուէն ալ : Նաւուն մէջ եղողներէն ոմանք ըսին թէ, ան կրակին նիւթը է մէկ խժային կամ իւղային հիւթ մը՝ որ կըբաղկանայ ծովին մէջ մէկ պատճառովմը՝ որ մեզի յայտնի չէ . ո-

մանք

մենք ալ ըսին թէ ան լոյսը ուրիշ բան չէ բայց եթէ մէկ տեսակ ձուկմը՝ որ կըփայլի ընականանոյս ։ Աս իրաւ է՝ որ մեր ծովերուն մէջ ալ կայ տեսակմը ձուկի՝ որ երբոր ծովէն կըհանեն ու սաստիկ մութ տեղմը կըդընեննէ այնպէս կըփայլի՝ որ մարդ կըկարծէ թէ ջամէ շինած պարապ ձուկմընէ մէջը կըրակ դրած ։ Աս ձուկէն շատ կըգըտնըվի Վենետիկ քաղքը ։ Ճամբորդները այսպէս զուարճալի քննութիւններ ընելով հասան Գուլուֆ Նարբէյուսոյ ըսուած քաղաքը, և երկաթ նետեցին կեցան 150 քայլ հեռու անտեղի բերդէն ։

Որովհետև նոյն ատենները Գուլուֆ Նարբէյուսոն փօրթուքէզներուն ձեռքնէր, անոր համար աս նաւին մէջ եղած Ֆրանսըզի մաթիմաթիգոսները հրաման ուզեցին անտեղի գլխաւոր կառավարէն՝ որ ցամաք ելլան իրենց գործիքներով ու աստղաբաշխական քննութիւներ ընեն, և խոստացան ալ սորվեցընելու անոնց՝ թէ նոյն տեղը ո՞ր երկայնութե աստիճանին տակ կիյնայ, վ՞ս զի մինչև անատենը փօրթուքէզներուն նաւապետները չէին գիտեր ու մակաբերելով միայն կըգտնային, որով շատ անգամ կըմոլորէին ։ Վենատէրսթէլը՝ որ էր

ան

անտեղի գըլխաւոր կառավարին անու-
նը , երբոր ասոնց խոստմունքը լսեց շատ
սիրով ընդունեցաւ ու տըվաւ ասոնց մէկ
փառաւոր տունմը՝ որ շինված էր ան ան-
ուանի պարտէզին մէջ , որ էր Ոլանտը-
գի Հինտիստանի վաճառականաց ընկե-
րութեր : Երբոր եկան մըտան Փռան-
սըվները աս պարտէզին մէջնէ , զարմա-
ցան ու ըսին թէ այսպիս գեղեցիկ պար-
տէզ քիչ կըգըտնըվի աշխըրքիս մէջ . ասոր
երկայնութիւնը էր 1411 քայլաւոր , իսկ
լայնութիւնը էր 235 քայլ . կար երկայն
ճամբաներ երկու կողմէն աղուոր աղուոր
ծառերով զարդարած . անոնցի երեսը
տընկած էր լիմոնի , նառի , ու փոր-
թուքալի ծառեր , և չորս կողմերը զար-
դարած էր մէկ տեսակ դափնի ծառե-
րով՝ որ յած ու ամառ ձմեռ կանանչ կը-
մընայ . ծառերով շինած ճամբաներէն
աւելցած տեղերը բաժնըված էր քառա-
կուսի քառակուսի , և աս տեղերուն պա-
ղչախին մէջը տընկըված էր ազնիվ հա-
մեղ պտղատու ծառեր , պաղչախին մէջ-
նալ տընկած էին զանազան ուտելու խո-
տեղէններ ղալղալըներ ու գեղեցիկ և
դժուարագիւտ ծաղիկներ . պարտէզին
մէջը կըպակսէր միայն ջուրերու զուար-
ճութիւնները մը շատրըվաններու ու աղ-

բիւր-

բիւրներու , և թէ որ վաճառականաց ընկերութիւնը ուզենար խարճ ընելնէ , աս ալ դիւրաւ կրնար շինուիլ , վ̃ զի աս պարտէզին մօտիկ եղած լեռնէն ականակիտ [illegible] ջուր կը վազէ ։ Ամէն Հինտիստանի վաճառականաց նաւերը երբոր կանգնին ասկից Հինտիստան երթալու համար՝ հոստեղը երկաթ կընետեն , ու ինչ բան որ ուզեննէ կը գրտնան աս պարտէզին մէջ ։ Պարտէզը մրտնալու դուան առջևը շինուած է անհամար խուցեր՝ ուրտեղ կը բնակին նոյն վաճառականաց ընկերութեան գերիները ։ Ասոնցմէ ոմանք կը բանեն պարտէզին մէջ , ոմանք ալ ուրիշ բանի կը ծառայէին ։ Աս մաթեմաթիգոսները կեցան հոնտեղը խել մը օր , ու իրենց աստղաբաշխական քննութիւնները ընելէն ետև գրտան որ , թէ որ Փարէզ 20 երդ երկայնութե աստիճանին տակը կիյնայնէ ; (միջօրէական գիծը առած երկաթի կըղզիէն) Գլուխ բարեյուսոն կիյնայ 35 ու կէս երկայնութե աստիճանին տակը՝ նոյն միջօրէական գիծէն առած ։

Փոխանորդները ճամբայ ելան Գլուխ բարեյուսոյէն յունիսի 7ին և մինչև օգոստոսի 5ը շատ ալեկոծութիւներու նեղութիւն քաշեցին՝ մինչև որ հասան Յա-

վա

վա ըսված կըղզին ։ Փռանսըզի դեսպանը շատ յոյս ունէր թէ երբոր Հասնին Բանթամի ծովեզերքներընէ հոնտեղը քիչմը հանգիստ առնուն , բայց Օլանտըզները՝ որոց ձեռքնէր աս քաղքին կէսէն աւելին , իրենց քովը բաւական զօրք չունենալնուն պատճառաւ , վախցան հրաման տալու Փռանսըզներուն որ ցամաք ելլան ։ Օլանտըզի գլխաւոր կառավարը անտեղի բերդին չիմացընելով թէ ինչ պատճառի համար հրաման չիտար Փռանսըզներուն որ ցամաք ելլան , աղաչեց որ երթան Բաթավիա , ու ինչ կարօտութիւն ունիքնէ ( ըսաւ ) ամմէն բան կըհոգան՝ անտեղը եղած օլանտըզները ․ ուստի Փռանսըզները ճամբայ ելան անկից ու հասան Բաթավիա օգոստոսի 18ին՝ ուրտեղ կեցերէին 18ը Օլանտըզի վաճառականաց ընկերուե̃ նաւ ։

Օգոստոսի 26ին անկից ալ ճամբայ ելան մէկ յաջող քամիովմը ․ նոյն օրը իրիկվան դէմ տեսան յանկարծակի երկու Թիւփէնկի մէնզիլ հեռաւորութե̃ մէկ մեծ նաւ մը՝ որ շիտակ կուգարկոր իրենց վր̃ ․ առջի Փռանսըզի նաւին մէջ եղողները ըսկսան աղաղակ վերցընել , բայց ինչ շահ , քամին սաստիկ ու յաջող ըլլալով մէկալ նաւին՝ եկաւ հասաւ

ան

ան նաւուն մէջ՝ ուր տեղ կեցեր էր փռան-
սըզին դեսպանը ։ ամենքը կարծելով
թէ ան եկածը խուրսանտի նաւ է , ա-
նոր համար ըսկսան պատերազմի պատ-
րաստուելն տեսնալ ։ ան նաւը եկաւ զար-
նըվեցաւ չաթըշմիշ եղաւ փռանսըզին նաւե-
րուն մէկուն հետ ու նաւուն խըչը կը-
տոր կըտոր ըրաւ , բայց մէկալ վրայ ե-
կած նաւուն մէջը հիչ մէկ մարդ մընալ
չերեւնար եղեր ։ փռանսըզները թիւ-
ֆէնկ մը պարպեցին անծանօթ նաւին
վրայ նշան տալու համար , բայց ո՛չ մարդ
երեւցաւ եւ ոչ շարժօղ եղաւ , եւ այսպէս
նաւը քօլերնուն անցաւ գնաց ու փռան-
սըզները հիչ մէկ բան մը չիմացան ։ Իբր-
բոր ☾ խամ Հասաննէ , անատենը իմա-
ցան մէկ նաւէ մը՝ որ փռանսըզներէն
վերջը ելեր էր Ռամթավխայէն , թէ ան
նաւը Ս․մստրամի նաւ է եղեր , որ եա
կըդառնար Ռալխմպանէն , եւ մէջի նա-
ւավարները ամենքը սաստիկ գինով
ըլլալնուն՝ ինկեր քուն կըլլան եղեր ։
փռանսըզները աս դիպուածքէն ետեւ
յաջողութե իրենց ճամբան ընելով ,
սեպտեմբերի 22 ին հասան ☾ չամի թա-
գաւորութե գետին բերանը ու երթէ-
սի օրը երկաթ նետեցին ։

Փռանսըզին դեսպանը [illegible] մը երկու
հը-

29008-63

հոգի խրկեց՝ որ երթան իմացընեն իր հասնիլը. առոնցմէ մէկը գնաց Պանքօք ըսուած քաղաքը՝ որ գետին բերնէն հեռու էր 10 փարսախ, մէկալնալ գնաց բուն Սիամի թագաւորանիստ քաղաքը՝ Պանքօքէն գըլխաւոր կառավար իշխանը երբոր լըսեց թէ փռանսըզի թագաւորին դեսպանը հասեր է, շուտ մը ինքնալ թագաւորին խապար խրկեց. թագաւորութիը առաջուց ալ խապար առեր էր Քօրօմանտէլին ծովեզերքներէն թէ այսպիսի դեսպան կուգայկոր՝ մէկ նամակով մը՝ որ խըրկըված էր առ Պարոն Կօստանթին՝ որ էր փոխարքան ճէշէրը անտեղի թագաւորին: Աս Կօստանթինին ինչ աղէկ ըլլալը ինչպէս առաջ գալը ու մեծնալը՝ պատմենք հոստեղը, որ թէպէտ և պատմութենէ կարգէն դուրս կելլայ, բայց շատ աղուոր օրինակ ըլլալուն համար աչքաբացութե ու կառավարելու զինքը, կարդացողներուն շատ մեծ օգուտ կրնայ բերել:

Կօստանթին փոխարքան ազգաւ հոռոմ էր և ծներ էր Քէֆալօնիա. ասոր հայրը Վէնէտիկի ազնուականներէն մէկն էր, և մայրը էր Քէֆալօնիայի մէջ եղած էն հին ու անուանի ազգատոհմներէն: Աս տղուն ծնօղաց ան-

կարգ

կարգ կառավարութիւնը ընձայուց բոլոր
իրենց ունեցած հարստութիւնը, և տղան
երբոր եղաւ տասվերկու տարվաննէ,
իմացաւ թէ իրեն աչքաբացութիւնը ու
ճարտարութիւնը միայն կրնայ երջանիկ
ընել զինքը, զէրէմ տեսաւ որ իր ծնո-
ղաց հարստութիւնը ոչնչացեր էր բոլորովին.
ուստի տղան այսպիսի խելացի մտածու-
թե̃ բաժնըվեցաւ իրեն ծնողացմէ ու
մտաւ մէկ Անկլիացի նաւու մը մէջ՝ որ
կերթարկոր Անկլիթէռա : Իրեն ավ-
նիվ կենցաղավարութիւնը ու բարեսիրտ
աչքաբացութիւնը, սիրել տըվաւ զինքը
ամէնունն՝ Լօնտուային մէջ. բայց ինչ
բանի որ յոյս ունէր նէ այնչափ չկյաջո-
ղեցաւ, անոր համար գնաց մտաւ Ան-
կլիթէռայի Հինտիստանի վաճառա-
կանաց ընկերութեան մէջ՝ Հինտիստան եր-
թալու ու հոնտեղը իրեն բաղդ գըտնա-
լու համար : Ռ.սկայ էն առաջ Ճիմ
գնաց, ու մէկ քանի մը տարի հոնտեղը
պաշտօնի մը մէջ ծառայելէն ետև, ու-
զեց որ անկից ետև ըսկսի վաճառակա-
նութիւն ընել, գիտնալով՝ թէ որ մէկը
կուզէ հարստութիւն գըտնալնէ ասկից
յարմար միջոց չիկայ տէղի :

Ռ.սկայ գնեց իրեն մէկ նաւ մը ու
լեցուց ապրանքով, բայց ճամբայ ընել-

նի-

նիքէն սատօնիկ գէշ հաւաներու հանդի-
պելով նաւը խորտակեցաւ ֆա––ալանմիշ
եղաւ Մ՝ալապարի ծովեզերքներու քո-
վերը : Աօստանթինը թէպէտև ապրե-
ցուց իրեն կեանքը , բայց հետը ունե-
ցած ըստակէն միայն 2000 ըռեալ կըր-
ցաւ խալըսցունել : Ա՛ս ողորմելին սաս-
տիկ տըրտմութէն ու աշխատանքէն չի
կըրցաւ կենալ ոտքի վրայ , անոր համար
իյնկաւ մէկղի մը ու ըսկսաւ քիչ մը քուն
ըլլալ : Նոյն ատենը աս Աօստանթինը
( ինչպէս որ շատ անգամ պատմերէ Տա-
շաւին ) թէ արդեօք քուն ըլլալով երազ-
մի տեսեր է , կամ թէ թմրած ըլլալով
աչվըները բաց մընայերէ ու մարդ տե-
սերէ , կամ թէ ինչ դիպուածք հանդի-
պեր է , ամենևին միտքը չիգար պարա-
գաները , տեսերէ մէկ փառաւոր ու յար-
գելի մարդ մը իրեն առջևը , որ խըղճա-
լով իրեն ողորմելուն վրայ անոյշ խօս-
քերով դարձեր ըսեր է Աօստանթինին
Եփ թարջէր Եփ թարջէր · աս բանը պատահե-
լէն ետև զգաստացեր է ու սիրտ առեր
է՝ նորէն Սիամ դառնալու : Յաջորդ-
օրը երբոր կը քալէր կոր ծովեզերքին վը-
րայ մըտածելով թէ ինչ կերպով նորէն
Սիամ դառնայ տէր , կըտեսնայ մէկ
մարդ մը՝ որ բոլոր զգեստները վերէն
մինչև

մինչև վար թրջած կուզայկոր դէպ'ի իրեն առջևը՝ տրտմած ու խեղճ ողորմելի կերպարանքով: Երբոր մօտեցան մէկվմէկունէ՝ Կոստանթինը հարցուց մէկալին թէ ինչ մարդ ես դու, անալ պատասխան տրվաւ թէ ինքն Սիամի թգ̃րին դեսպաննէ եղեր, և Պարսկաստանէն Սիամ դառնալնիքէն սաստիկ քամիով (որով որ Կոստանթինին նաւը խորտակեր էր) ասոր նաւնալ նոյն յամաքը վարկերէ, և ինքը միայն խալսեր յամաք ելեր էր. և որովհետև Կոստանթիննալ աղէկ գիտէր Սիամացւոց լեզուն, ինքնալ պատմեց իրեն գլուխը եկածը, և այսպէս քիչ մը խօսակցութ̃ի ըլլալէն ետև, Կոստանթինը տեսաւ որ դեսպանը վերջի ողորմելութ̃ե մէջ ինկերէ և ճար չունի Սիամ դառնալու, խոստացաւ անոր՝ որ իրեն խարճովը տանի Սիամ՝ ուր տեղ որ պիտոր երթարնէ. անոր համար ան երկու հզ̃ր ըռուպով որ ունէր՝ գնեց մէկ մեծկակ նաւակ մը ու բաւական ճամբու կերակուր և այսպէս մըտան նաւ: Կոստանթինին ըրած առատաձեռնութ̃իը ու ցըցուցած սէրը այնչափ տըպաւորութ̃ի ըրին աս դեսպանին սրտին մէջ, որ ճամբուն մէջ կըմըտածէր՝ թէ երբոր Սիամ համնինէ ինչ

բա-

բարիք ընէ աս մարդուն ըրած բարերա-
րութենը՝ ցըցունելու համար իր երախ-
տագիտութիւնը ։

Ասոնք իրենց ճամբան յաջողութեամբ
լմնցընելով վերջապէս հասան Սիամ·
դեսպանը գընաց մէկէն Պարքօլանին
քովը՝ որ էր Սիամի թէքրութեն փոխար-
քան, ու իրեն նաւակոծութիւնը պատմե-
լէն ետև, իրեն բարերարին վրայ այն-
չափ գովեստ խօսեցաւ որ փոխարքային
հետաքրքրութիւնը եկաւ տեսնալու աս
Կօստանթինը, անոր համար շուտ մը
հրաման ըրկեց որ գայ ներկայանայ ի-
րեն առջևը. և փոխարքան երբոր տե-
սաւ զանիկայ հարցուց շատ բաներ ։ Կօս-
տանթինն ալ ամմէնուն պատասխանը
տըվաւ, այնպիսի անոյշ կերպով ու քա-
ղաքավարութեամբ՝ որ փոխարքային սիրտը
կապվեցաւ վրան ու իրեն քովը առաւ ։
Որչափ հարկաւոր է որ ամմէն ծնօղք
աչքերնին բանան կըրթելու իրենց տղա-
քը պզտիկուց ու սորվըցընելու անոնց
քաղաքավարութիւն, մարդավարութիւն, վասն
զի աստուծմով հէմ տղան մեծնայնէ մարդ
կըլլայ, հէմ շատ անգամ այսպիսի ի-
րենց անոյշ կերպին համար՝ մեծ բաղդ
կըգըտնան, ինչպէս շատ անգամ տես-
նըվէրէ աշխարհքին մէջ, և ինչպէս պա-

տա-

տաղնեցաւ առ Կոստանդինին ալ. վն զի փոխարքան իրաւ որ շատ խելացի մարդ-միներ, բայց քիչ մը ծոյլ ըէմպէլ էր, ա-նոր համար երբոր տեսաւ զասիկայ՝ որ խելացի աչքաբաց ու ճարպիկ մարդ էր, յանձնեց առոր իրեն ընելու պաշտօննե-րը, ու փոխարքան անձամբ գընաց Թա-գաւորին քովը ու այնչափ գովեց զասի՝ որ Թագաւորին սիրտնալ կապել տըվաւ առ Կոստանդինին վրայ, և քիչ մը ժա-մանակէն ետև առաջ քաշեց ու դըրաւ զասի մեծ Թագաւորական պաշտօնի մը մէջ։

Երբոր Պարքօլան առջի փոխարքան մեռաւնէ, Թագաւորը ուզեց որ զասի-կայ ընէ իրեն փոխարքայ, բայց Կոս-տանդինը խընդրեց Թագաւորէն որ զինքը ազատ ընէ ան մեծ պաշտօնէն ը-սելով" ով Թագաւոր, չըլլայ թէ առ մեծ պատիւը առնելովս՝ Թագաւորու-թեան մեծերուն նախանձը շարժեմ վրաս, բայց 'ի վերայ այսր ամի ըլլայ քու վե-հափառութեան կամքը, և ես միշտ պատ-րաստ եմ ծառայելու ,, ։ Աս Կոստան-դինին խելացի պատասխանը և կերպը, Թագաւորին սէրը ու համարումը տա-հա շատցուց իր վրան, և մէկէն փոխար-քայութեան մատնին տըվաւ անոր, և Կոս-

տան-

տանթինը ըսկսաւ իր խելքովը կառավարել թագաւորութե̃ բաները։
Կոստանթինը մեծ սէր ու համարում ունենալով Փռանսըզներուն վրայ այնպիսի կերպով կարգաւորեց՝ որ թագաւորէն հրաման ելաւ թէ փառաւոր համդէսով ներս ընդունին Փռանսըզին դեսպանը։ Կոստանթինը անձամբ գընաց պատրաստելու համար ասոնց մէկ փառաւոր պալատը. աս միջոցիս բոլոր թագաւորութե̃ մեծ իշխանները գացին Փռանսըզի դեսպանին նաւը՝ բարեւելու համար, և երբոր ըմընցան մէկ զմէկ բարեւելը, աս իշխաններուն մէջէն էն ծերագոյնը (որոնք կուտան թէ հոգեփոխութի̃ կըլլայ) ըսկսաւ ըսել Փռանսըզի դեսպանին այսպէս." Ես կըճանչնամ աղէկ որ քու տէրութի̃դ 2000 տարի առաջ մէկ անգամ մընալ Փռանսայէն Ը խամ եկերէ իբրեւ դեսպան, նորոգելու ու հաստատելու համար բարեկամութի̃նը երկու ազգաց թագաւորներուն մէջ,,. Փռանսըզի դեսպաննալ քաղաքավարութե̃մբ պատասխան տըւաւ ըսելով թէ իմ միտքս չիգար որ ես այնչափ հազար տարի առաջ ըրած ըլլամ աս գործքը, և ինչպէս որ ես գիտեմնէ՝ ասիկայ առջի ձամբորդութի̃ս է՝ որ ըրի իմ

Թագաւորիս հրամանովը դէպ՚ի Չ խամ. աս խօսակցութիւնները լըմըննալէն ետև ․ իշխանները մտան իրենց նաւակներուն մէջ ու գացին ։ Մ․նատենը Փուանսըզին գեսպանը հրամայեց Թաշաուին՝ որ աս-նոր իր ընկերներէն երկու հոգի ու քան զինքը առաջ Չ խամ երթան ․ ուստի ա-սոնք մըտան մէկ նաւակի մը մէջ ու ի-րիկունը հասան անմիջապէս գետին բե-րանը ։ Թաշաուը տեղնիտեղը կըստորա-գրէ աս գետին աղուորութիւնը իբրև մէկ զարմանալի բան մը ․ գետին երկու կող-մը ( կըսէ ) կար սըխ սըխ բարձր ծառեր որ միշտ կանանչ կըմըննան , ասոնց ետևը կար այնչափ մեծամեծ բրինձի դաշտեր՝ որ աչքով մէկ ծայրէն մէկալը չէրև-նար , և աս դաշտերը շատ ցած ըլլալով գրեթէ վեց ամիս ջուրի տակ է , և աս պատճառով այնչափ առատ բրինձ կըլ-լայ անտեղը՝ որ հոնտեղի բնակիչները առատամիս պօշ պօշ վայելելէն ետև՝ կը-տանին կըծախեն ուրիշ քաղաքներ ալ ․ դաշտերուն մէջի բնակիչները նաւակ-ներով կըքալեն ու ան նաւակներուն մէջը միշտ կըբընակին , այնչափ բազ-մուի են ասոնք , որ մէկ չիգիտցողը հե-ռուէն տեսնայնէ՝ կըկարծէ թէ զանա-զան շարժական գեղեր են ջուրին վրայ ։

Թաշառը՝ որ իր ընկերներով գիշեր-
նալ ճամբայ ըրաւ գետին մէջէն, տե-
սերէ որ անհամար լուսաւոր ճանճեր՝
երկինքին աստղերունպ՟ս աստիս անդին
կըթռչէին, և գետին երկու կողմը ե-
ղած բարձր ծառերուն վր՟ այնչափ կային
նոյն ճանճերէն՝ որ բոլոր ծառերը գե-
ղեցիկ լուսով լուսաւորված կերևնար.
աս անթիւ լուսաւոր ճանճերը որ պծա-
ռերը մէյմէկ ջահեր ճրագներ ձևացու-
ցերէին, գետին յստակ ջուրնալ մէկ
հայլիի մը պէս տահա կըշատցընէր ան
ջահերուն լոյսերը անդրադարձ ցոլացը-
նելով. աս գեղեցիկ տեսքին աղուորուիը
անատենը մարդ կիմանայ ( կըսէ Թա-
շառը ) երբոր աչքով տեսնայնէ: Ճամ-
բորդները՝ այսպիսի զուարճալի գետին
մէջէն անցնելնիքէն, մէյ մընալ յան-
կարծակի եկան հասան վրանին անհա-
մար պիծակներ սիվրիսինեկներ, որոց խայ-
թոցը այնչափ երկայն ու սուր էր՝ որ կը-
խայթէին մարդուն մարմինը զգեստին
վրայէն ալ: Երբոր ընկաւ առաւօտ ըլ-
լալնէ, տեսան անթիւ կապիկներ մայ-
մուններ որ ոմանք պըլլըլելով կելլային
ծառերու վրայ, ոմանք ալ խումբ խումբ
եղած աստիս անդին կըքալէին: Հոն-
տեղը եղած ծառերուն վր՟ թառեր խօս-

Դիզ եղեր էին այնչափ անհամար մէկ տե-սակ ձերմակ թռչուններու մը՝ որ ճամ-բորդները հեռուէն կարծեցին թէ բուն ծառին ծաղիկներնեն. և շատ աղուոր կերևնար չիտեսնողին՝ թռչուններուն ձերմըկութինը խառնըված ծառին կա-նանչ տերևներուն հետ։ Աս թռչունին թէ՛ մարմինը և թէ փետուրները շատ գեղեցիկ ու ձիւնէն աւելի ձերմակ է. թռչունին վրայի եղած էն աղուորութինը է ան երկու սորղուճը՝ որ մէկը կռնակին վրայ է, մէկալն ալ փորին տակը։ Այն տեղի ուրիշ թռչուններնալ մէկը քան զմէկալը սիրուն են, մանաւանդ իրենց փետուրներուն գոյները. կայ դեղին, կարմիր, կանանչ, կապուտ։ Չիամի ընակիչները որովհետև կըկարծեն՝ թէ մէկ մարդ մը մեռնելէն անոր հոգին կեր-թայ կըմըտնայ մէկ կենդանիի մը մէջ, անոր համար հիչ մէկ անասուն կենդա-նի մը չեն մորթեր, և կըսեն թէ անոր համար չենք մորթեր՝ որ գլի չի փախցը-նենք մեր ազգականներուն հոգիները՝ որ կըրնայ ըլլալ թէ հոն գըտնըվին։

Ասոնք ամմէն մէկ փարսախ ճամբու մէջ կըտեսնային մէյ մէկ կուռքերու տուներ, որոց քովը շինած կար վանքի պէս տեղ մը՝ ուր տեղ կըբընակէին Չիա-

մացույ քուրմերը ու անտեղի կրօնաւոր-
ները . աս տեղերը է նաև շատ շատ
դպրատուններ՝ ուր տեղ կըկրթեն ազ-
նուականաց տղաքները . որ տղայ որ
կըմըտնայնէ աս դըպրատունը , կըհագ-
ցընեն անոնց մէկ զգեստ մը դեղին բամ-
պակ լաթէ՝ որ կարված է երկու կտորէ
միայն . ըզգեստին մէկ կըտորը կըգոցէ
մարմիննին գլխէն մինչև ծունկերը , մէ-
կալնալ վըրանին կըփաթտեն ձիուպպէի-
մը պէս ։ Ասոնք կըգերծեն բրաշ կընեն
գլուխնին ու ընքվըննին՝ ինչպէս որ կընեն
իրենց քուրմերը . վո՛ չի կըկարծեն թէ
երկընընալու ըլլայնէ աս երկու տեղին
մազերը՝ պարկեշտութե՛ դէմ կըլլայ ու
մեղք է ։

Նաւաշարը այսպէս ճամբայ ընելով հա-
սաւ Պանքօք՝ որ է մէկ մեծ ու հարկա-
ւոր քաղաք մը՝ Սիամի թագաւորութե .
վո՛ չի աս քաղաքը բերդ մը ունենալով
կըպաշտպանէ գետին անցքը ։ Պանքօ-
քէն մինչև Սիամ բոլոր ճամբաները
լըցուն են անհամար գեղերով . բոլոր
աս տեղի բնակիչները կըբնակին տաղա-
ւարներու փօլէճաներու մէջ՝ որ շինած են
բարձր սիւներու վրայ , ու շինուածքին
նիւթը է Պամպուսու ըսված ծառին փայ-
տէն՝ որ հնտստանու կողմերը շատ կը-
գոր-

գործածվի․ այս ծառին արմատը քէօքը ու
հաստը ձիւղերը կըգործածեն բարձր
սիւներ ու գերաններ շինելու համար,
իսկ մնացած բարակ ձիւղերով կըգո-
ցեն տաղաւարներուն յարկը տաւանը ու
պատերը․ ամէն գեղերուն մօտիկ շինը-
ուած է մէյմէկ խոհակերանոց աշճէէ
խանութ, որ գետին մէջ ձամբորդու-
թիւ ընողները իրենց կերակուրները հոն
կուտեն։ Կերակուրները՝ որ եփած էր
Շխամի սովորութենը կեօրէ, Եւրոպա-
ցիք չիկրցան ուտել, վ՟ զի իրենց կեօրէ
անսովոր բաներ էր։ Փաշաւը իրեն ըն-
կերներով մըտաւ Շխամ, որ է մայրա-
քաղաքը նոյն թագաւորութե՟, ամբողջ
եօթը ամիս ձամբորդութի՟ ընելէն ետև,
ու գնաց անտեղը՝ ուր տեղ վերի ըսած
Կոստանթինը կըպատրաստէր կոր փա-
ւաւոր պալատ մը Փռանսըզի նոր եկած
դեսպանին համար։ Պալատը էր քաղաքի
մէջի էն աղուոր տուներէն մէկը, մէջը
կար երկու մեծ սրահներ սօֆաներ որ
պատած էր չորս կողմէն այնով, ամե-
նաբարակ ու գեղեցիկ գոյներով քաշ-
ուած կըտաւէ․ մէկ սրահին նըստարան-
ները զարդարուած էր կապուտ խատի-
ֆէներով, մէկալինը զարդարուած էր
կարմիր խատիֆէով՝ չորս դիերը ոսկի

շէրիտ կարուած . ան խուցին դռան առ-
ջևը՝ ուր տեղ նստէր պխտոր դեսպանը ,
կախուած էր մէկ վարագոյր մը ձերմէնք
Բաբելոն շինուած , որուն գեղեցկութե-
նմանը քիչ կը գտնըվի ։ Տիվանխանէն սրահը՝
որ բաժնուած էր մէկալ տեղերէն մէկ
դաւիթով մը ալըայքմէ , էր .Ք վամմէ-
նը գեղեցիկ , և շինուած էր մաննաւոր ա-
մառվան համար . ասոր դռան առջևը
շինուած էր մէկ փառաւոր ու վարպետա-
չէն Փխսկիէ մը . Ներսի կողմը կար մէկ
անկողինմը՝ վրան ազնիւ զարդերով շի-
նած էր մէկ վրան չարքա մը . սրահին մէկ
կողմը շինուած էր մէկ մեծ փառաւոր
թևով նստարանմը , ու բոլոր սրահին
չորս կողմերը զարդարուած էր մեծ ու
պզտիկ , ազնիւ ու դժուարագիւտ յախ-
ճապակիներով Փոռփոռէններով ։ Աշա-
ուր կը պատմէ տեղնի տեղը աս տեսած-
ները , վա՛ ըլ կարդացողներուն կրնայ
զարմանալի բանմը երևնալ , իմանալով
թէ աշխարհքիս մէկ ծայրը եղած տե-
ղերուն մէջինալ աղւոր շէնքեր , գիւտեր
ու ամմէն տեսակ ազնիւ զարդարանք-
ներ կը գտնըվի՝ որ Եւրոպայիպէս կըր-
նայ պարծիլ ։

Երբոր աս ամմէն պատրաստութիւը
լըմնցնելու վրայ էր , Շ խամի թագաւո-

րը խրկեց երկու իր գլխաւոր պալատա-
կան իշխաններէն հանդերձ 10 ուրիշ
իշխանով՝ որ երթան բերեն նաւէն Փը-
ռանսըզի դեսպանը ․ իշխանները նստե-
րէին ամէնքը մէյմէկ թագաւորական
նաւակներու մէջ՝ որ իւրաքանչիւր նաւ
զարդարուած էր ինչպէս կըվայլէ թա-
գաւորի մը ․ այն նաւակը՝ (*) որուն մէջ
նստէր պիտոր Փռանսըզին դեսպանը ,
բոլոր ներսի կողմը ոսկեզօծած էր , և
նաւակին երկայնութը կար 72 ոտք ․ իսկ
թիավարները խայըխճիները էին 70 հոգի ,
ամէնքը 100ի մէջէն ընտրած կըտրիճ
մարդիկներ ․ իրենց ձեռքի թիերը պա-
տած էր վերէն մինչև վար արծաթով ․
նաւակին մէջ տեղը կար ամպհովանիմը
ծիրանեգոյն ազնիվ չուխայէ ․ ասոր կո-
թերը էր փղոսկրէ Քէնարլէ ու վրայի ե-
ղած գունտերը Թօփուզները ազնիվ Չի-
նումաչինի ոսկի է , ամէն բարձերը էր
ազնիվ քէմխայէ ․ էն տակը բռած էր
աղ-

(*) Այս տեսակ նաւակին Շիամցիք կըսեն Պա-
լօն, որուն ձևը արտաքոյ կարգի բան մընէ ․ ասոնք
իրենց երկայնութենը կէօրէ շատ նեղ են ․ կայ Պա-
լօն որ 100 կամ 120 ոտք երկայն է , իսկ նաւակին
էն լայն տեղը հազիվ թէ վեց ոտք է ։ Թիավարը-
ները երբեմն կըլլան 30 կամ 40 երբեմն 100 , կամ
120՝ մէջի նստողին մեծութէ աստիճանին կէօրէ ։

աղւոր պարսկաստանի խալիմը ։ Ես նաւակին հետ կար ուրիշ 16 նաւակ ալ զարդարուած քիչ մը պակաս վերինններէն, որուն մէջ մըտնային պիտոր դեսպանին հետ եղած ազնուական մարդիկները ։ Պանքօքին գլխաւոր կառավարն ալ խըրկեց խել մը իշխաններ իրենց նաւակներով, և այսպէս եղան 66 նաւակ ու գացին առին դեսպանը նաւէն ու փառաւոր հանդէսով բերին մըտուցին Սիամ. դեսպանը մէկէն գնաց այցելու ընելու Թագաւորին ։

Սիամի Թգ̃րութեան սովորութիւնն է՝ որ երբոր կուգայ մէկ դեսպանը ուրիշ Թգ̃րին կողմէննէ՝ երկու անգամ կերևնայ Սիամի Թգ̃րին հետ. մէյմը երբոր նոր կուգայ, մէյմալ երբոր ետ կըդառնայնէ. աս առաջնվան Թգ̃րը որոշելու համար աս անգամի դեսպանին գալը ուրիշ անգամվաններէն, ուզէց որ Թգ̃րին երկու անգամ միայն երևնալուն կարգը վերցըվի, անոր համար ըսաւ դեսպանին, երբոր կուզեսնէ եկուր տեսնըվէ ինծի հետ ։ Ես առջի անգամ այցելութիւր ընելէն ետև անցաւ վրան տասը օր, Թգ̃րը իրեն սեղանը հրաւիրեց փառաւորվին դեսպանը. սեղանը շինված էր Թգ̃րական պալատին առջևը եղած ծառէ.

ւերուն շուքին տակը 24 հոգւոյ հա-
մար . բոլոր սեղանին թախըմը և ամանն-
ները էին ազնիւ ոսկիէ ու արծաթէ .
սեղանին չորս կողմը դրըված էր պա-
հարաններ որոց մէջէն միշտ ազնիւ ու
անուշահոտ բաներ կըծըխէր . սեղանը
քըշեց դրեթէ չորս սահաթ, 150 տե-
սակ կերակուր եկաւ սեղանը . ամէն
կերակուրի հետ դրեթէ կար զանազան
տեսակ ախորժակ էշաց բայօղ բաներ,
աւանց սեպելու ասոնց մէջը, ինձէ մանը
ձաները, անուշեղէնները ևն ևն . եօթը
տեսակ ազնիւ ու անուշահոտ գինիներ
կար : Սեղան նստելէն առաջ թագաւո-
րը հրամայեց որ իրեն թագաւորութե-
ան մեծ իշխանները ծառայեն սեղանին վը-
րայ՝ ոչ զի աւելի փառաւոր ու հանդի-
սաւոր ըլլայ եղած կոչունքը [illegible] :

Սեղանին վրայ շատ տեսակ խօսակ-
ցութիներ անցնելէն ետև, խօսքը եկաւ
թագաւորին կուռքերուն վրայ՝ որ էր ի-
րեն պալատին մէջ, անոր համար Փուան-
ալզները խնդրեցին թագաւորէն որ ցը-
ցընէ իրենց անոնք ալ : Երբոր սեղանը
լըմընցաւնէ, թագաւորը առաւ զասոնք
ու տարաւ իրեն պալատին մէջ եղած
կուքատունը : Աս տեղը շինված էր իրեք
խաթ մէկզմէկու վրայ, և յարկերը Բ-

Վաննէըը քօցված էր ՝Իսուլէն ըսված առ-ուեստաշէն մետաղով՝ որ շատ ձերմակ է խալայէն ու խուրշինէն. կռքատունին դուանը մէկ կողմը վարդարուն կերպով քաշված էր մէկ կովմը, մէկալ դին ալ քաշված էր մէկ վարհուրելի ու այլանդակ հրէշմը ։ Նոբոր մէկը դուռէններու կըմոնայնէ, ուրիշ բան չիտեսնէր բայց եթէ ոսկի. կռքատունը թէպէտ շատ երկայն էր բայց լայնքը խիստ նեղ էր. աս տեղին սիւները, պատերը, յարկերը ու արձաններըը այնչափ աղուոր ու վարպետութեէ ոսկեզօծված էր՝ որ կըկարծըվէր թէ պատած էր ոսկի թիթղով Բէնէչէյով. բոլոր շէնքը շինված էր հաւտըր սիւներու վրայ, և մէկ կողմը շինած էր խորանիպէս տեղմը՝ որուն վրայ կար չորս արձան զուտ թափցու ոսկիէ և բարձրութինին էր գրեթէ մէկ մարդու հասակի պօյէ չափ. աս արձաններուն մէկը միայն կեցած էր ոտքի վրայ, իսկ մէկալները պաղպաղ խմբ ըրած նստեր էին՝ ինչիպս որ սովորութի ունին ☾ խամացիք ալ ։ Խորանին ետև կար դասինչս տեղմը՝ որուն մէջ կըպահէին միայն էն աղնիվ ու հարուստ կուռքը ☾ խամի թագաւորութէ. աս կուռքին արձանը կեցած է ոտքի վրայ ու գլուխը վերի յարկին

կին կըպած է, վ̄ն զի բարձրութիւնը էր 25 ոտք, իսկ լայնութիւնը 6 կամ 8 ոտք ։ Թաշառը կը հաստատէ թէ անտեղի ժողովրդեան ըսածին կէօրէ աս արձանը բոլոր թափցու ոսկիէ է, եւ տեղը շինելէն առաջ թափերէն հոն, ու շինուածքը անոր կէօրէ շիներ են ։ (*)

Թագաւորին պալատէն հարիւր քայլափըմ հեռու դէպ՚ի հարաւային կողմը, կայ մէկ ընդարձակ դաշտմը՝ չորս կողմէն պատած ամուր պատերով. դաշտին էն ուլթա տեղը կայ մէկ մեծ ու աղուոր շինուածքմը խաչաձեւ 5 գմբէթով, որոց ամէնքը ոսկեզօծած էր. մէջ տեղի գմբէթը ք̄ չորս ծայրի եղած գմբէթները խաչաձեւ շինուածքին՝ մեծ էին. աս բոլոր շինուածքը կեցած է պատուանդաններու վրայ, եւ աս պատուանդանները այնպիսի ձեւով շինած է՝ որ վարը լայն եւ քանի որ վեր կերթայնէ կը նեղնայ, վրայէ վրայ դրուած քարերով՝ մէկը մէկալէն քիչ մը նեղ ու վրան ծածկած

(*) Թէպէտ եւ Թաշառը կըպատմէ թէ աս արձանը բոլոր ոսկիէ է, բայց սխալ է, վ̄ն զի Փօռպէն տասպետին ըրած քննութենը կէօրէ որ քալեց ան տեղվանքը, կըսէ ան արձանին համար թէ բոլոր ոսկիէ շինած չէ, այլ թափած է պղնձով, ու միայն վրայէն թանձր ոսկի ջուր տրված է ։

կած քաղքին ըսված մէտաղով. այսպէս ըլլալով պատուանդաններուն չորս կողմէն սանդուխ մըրթէքէն կըձևանայ 40 աստիճանով ու չորս կողմէն ալ վէր կըլնայ եւ ըլլէլ. իւրաքանչիւր աստիճանին հաստութիւնը էր երեք թիզ խորըը: Պատուանդաններուն էն վարի աստիճաններու երկու կողմերը զարդարված էր 20 արձանով՝ որոց մեծութիւնը աւելի էր քան զսովորական հասակէն թէ՛ մարդու և թէ կենդանիներու. աս արձանները շինած էր մէկը պղինձէ մէկը քաղքին մէտաղէ՝ բայց ամմէնը ոսկեջրած, և ամմէնսերին չէր նման ան մարդիկներուն ու ան կենդանիներուն՝ որոց կերպարանքը ձևացուցեր էին: Աս փառաւոր շէնքին չորս կողմէն շինված էր երեք խաթ պատուանդան ալ՝ որուն վրայ տնկըված էր 44 բուրջեր տարբեր տարբեր ձևերով. ասոնց բանուածքը ու շարվածքը շատ փարպէտ էր: Բուրջերուն մէջէն չորս էն մեծերը դրըված էր պատուանդանին վարի աստիճանին չորս անկիւնները ձե- շէնքը լայն ու ամուր հիմերու [illegible] րու վրայ, ասոնց ծայրերը սուր կոնոնաձև կըվերջանար, ու աքանչելի փարպետութ ոսկեզօծած էր. բուրջերուն էն ծայրը տընկած էր մէկ տէգ մը [illegible] էր.

երկաթէ՝ որուն վը՛ր անցուցած էին մեծ ու պզտիկ ապակիէ պէլլօ՛ւր գնտակներ ․ աս բուրգերուն շէնքը շինված է մէկ տեսակ ճարտարապետութիւնը որ շատ կըմօտենայ Եւրոպական ճարտարապետութեան , բայց խիստ շատ ըլլալով բուրգերուն վըրայ փորված արձանները , կըկորսընցընէ կոր քիչ մը իր համեմատութիւնը ու գեղեցկութիւնը՝ բաղդատմամբ Եւրոպայիններուն , գէթ անոնց աչքին՝ որ սորված չեն տեսնալու այնպիսի կերպ ։

Պատվանդանին երկդ աստիճանին վըրայ՝ որ քիչ մը վարինէն բարձր էր , շարված էր քառակուսի ձևով 36 ուրիշ բուրգեր , քիչ մը պզտիկ առջի աստիճանին վըրայ շարածներէն և չորս կողմը դըրված էր ինը ինը ․ աս բուրգերուն ծայրերը ոմանցը սուր ինչէ էր առջիններունիպս , ոմանցն ալ գմբեթաձև , և այնպէս կերպով շարած էր՝ որ երկու նոյն ձևով բուրգեր չէր տեսնըվէր քովէ քով ։ Երդ աստիճանին անկիւններուն վըրայ տնկըրված էր չորս ուրիշ բուրգեր ալ ․ աս էն վերինները էն վարի չորսէն պզտիկ էին բայց միջիններէն մեծ էին ու ասոնց ծայրնալ սուր կըվերջանար ։ Աստի այսպէս բոլոր ան խաչաձև շինվածքը չորս

կող-

կողմէն մէջ առած էր մեծ ու պզտիկ բուրգերով զարդարուած քառանկիւնով մը՝ որուն կողմերուն երկայնութիւնը էր 120 սովորական քայլէն աւելի. իսկ բարձրութիւնը 15. ասոր Ճամբաները շինուած էր դէպ 'ի կռատունը ու բոլոր յարկը [illegible] ոսկիով պատած ու զանազան քաշուածքներով զարդարած ։ Ճամբաներուն ներսի կողմէն դրսի պատին երկայնութիւնը շինուած էր մէկ երկայն պատուանդան մը պատին հետ հաստատած՝ որուն վրայ շարեր էին 400 արձան խիստ աղւոր ու վարպետութեամբ ոսկեջրած. աս արձանները Թէ՛պտ և շինած էին կղմինտրով [illegible] ու ոսկեզօծած էր, բայց աչքի շատ գեղեցիկ կերևնար, և այնչափ նման էին մէկ զմէկու՝ որ իրենց մեծութեան տարբերութիւնը չըլլալնէ մարդ կըկարծէր թէ ամմէնը նոյն կաղապարէ [illegible] եղած են ։ Աշտառը աս արձաններուն մէջ համբեց 12 հատ՝ որ հսկայաձև շինուած էին, ու ամմէն Ճամբաներուն մէջ տեղը մէյմէկ հատ, ու երկերկու ամմէն անկիւնները դրած էին, բայց իրենց մեծութեանը համար [illegible] ընել տրուած նստուցեր էին ։ Աշտառը հետաքրքրութեան համար չափեց աս արձաններուն մէկուն սրունքը

պաճաճը՝ որուն երկայնութիւնը ոտքին ծայրէն մինչև ծունկը էր եօթը ոտք. ցուցամատը հաստ էր հաստարակ մարդու թևի պէշէնէ չափ, և այսպէս կիմացուի բոլոր մարմնոյն համեմատութիւնը ։ Ասոնցմէ զատ տեսաւ ուրիշ 100 արձան՝ որ քիչ մը մանր էին քան զառջինները, մէջի ասոնց սրունքին երկայնութիւնը ոտքին ծայրէն մինչև ծունկը էր չորս ոտք. վերջապէս անտեղը կար 300 արձանէն աւելի՝ որ ք̅ բնական հասակը մարդու մեծ էին. ասոնցմէ զատ կար մանր մունր տղու արձաններ ալ՝ որ խառնած դրած էին մէկալներուն հետ ։

Մաշաւը ինչպէս որ կըսէնք Փուանսայի մէջ չիկայ այնպիսի շէնք մը՝ որ ունենայ այսչափ համեմատութի ու կարգ ։ Ասոր բոլոր շէնքին դուրսի երկու կողմէն տընկըված էր 16 մեծ բուրգեր՝ որոց ծայրը գըմբեթաձև կըլըմընայ, ու բարձրութիւնին էր 40 ոտքէն աւելի. ասոնք շարված էր մէկ գծի վրայով հաստը սիւներուպէս, ու վրանին շինած էր խորշիպէս կէ-ձէ-րէէպէ մեծ տեղեր՝ ուր դրած էին զանազան կուռքեր ։ Աս շէնքին գեղեցկութենը վրայ այնչափ ըզմայլեցան Փռանսըզները, ու բոլոր իրենց ժամանակը հոն անցուցին աչքեր ընե.

ընելու, ու այսպէս ժամանակ չունեցան երթալու տեսնալու ուրիշ կուռքատուն-ներ ալ՝ որ կար անտեղվանքը մօտիկ ։ Ը խամի մէջ անիկայ աւելի ազնուական ապչգատոհմ կըսեւոյլի, որուն տունը որ շատ խալթ ունի. Թագաւորին բնակա-րանը եօթը խալթ է ։

Թագաւորին բրած սեղանը լըմըննա-լէն ետև ու կուռքատունները տեսնալէն ետև, տարին դեսպանը զբօսանքի ու խա-ղերու. առաջին խաղը էր թէատրոն մը Չինումաչիններուն կերպով շինած, ու պար բռնել. աս տեսարանը լըմըննալէն ետև եկան անտեղի վարպետ ճամփաղունե-րը ու ըսկսան խաղալ. կար հոնտեղը տնկած կարգաւ ծառերու պէս բարձր ցի-ցեր 80 կ:մ 100 ոտնաչափ երկայնութ. ասոնց վրայ ելան ճամփաղուները ու կեցան մէկ ոտքով՝ մէկալ ոտվընին վեր օդին մէջ բռնած, ետքը ծռելով գլուխնին դրին անտեղը ուր տեղ կեցեր էր ոտ-վընին ու մէյմընալ յանկարծակի թերս դարձան գլուխնին վար ոտվընին վեր. աս ալ լըմընցաւ նէ, ամմէնքը մէկէն դունչերնին կուլթնցուցին ցիցին ծայ-րերուն ու իրենք զիրենք վար կախեցին միայն դունչերնուն՝ առանց մէկ տեղ-մը կուլթընելու, ու ետքը վար իջան

սան-

սանդուխներով , բայց այնպիսի արա-գութբ̃՝ որ մէկ չիտեսնօղը չիկրնար երեւակայել ու հաւտալ ։ Աս ալ լըմըն-ցունէ, եկաւ մէկ ուրիշմը ու բերաւ հե-տը ճաղիպէս բանմը ու տնկեց ասոր վ̃ր ութը ծայրը սուր խթաններ սէվրէ պէ-չէր , բայց սուր կողմը դէպ ՚ի վեր ․ Ճամ-պազը ելաւ էն առաջ նստաւ աս խթան-ներուն վրայ , անկից վերջը մերկ չըպլախ մարմինով պառկեցաւ կռնակին վրայ ինչպէս անկողինին վրայ , այնպէս որ իրեն մարմինը բաց ՚ի խթաններուն ծայ-րէն դպած չէր ուրիշ տեղ ․ անատենը ելաւ կայնեցաւ աս պառկողին վրայ մէկ ուրիշ ծանր մարմինով մարդմը , բայց ՚ի վերայ այսր ամ̃ի ան սուր խթանները ա-րուն վրայ պառկեր էր Ճամպազը , ո՛չ մարմնոյն մէջ մըտաւ և ո՛չ մարմնոյն վրայ նշան ըրաւ ։

Հոկտեմբերի 28 իմը Շ խամի թ̃րը հրատարակեց թէ քաղքէն իրեք փար-սախ հեռու երեւելի կուքատունը երթայ պիտոր հանդէսով աղօթք ընելու հա-մար , և ետքը պիտոր երթայ այցելու-թի ընելու Անճրպաչին՝ որ էր իրենց կրօ-նին գլխաւորը ․ ուրիշ անգամ երբոր կերթար աս հանդէսը ընելունէ , թէ որ նոյն ատենը անտեղի գետերը չափէ-

դուրս լեցուած ըլլարնէ ջուրով, Թագաւորը իրեն մարդիկներով էն առաջ կերթար գետին վրայ ու իրեն խումբուխով կըզարնէր ջուրին վրայ ու կըհրամայէր որ անկից ետեւ ցածնան ջուրերը. բայց խելմը առեն կար որ աս գործողութիւր վերջացուցեր էր Թգ՟րը, վ՟ս զի շատ անգամ եղեր որ Թագաւորին հրամայելէն ետեւ՝ փոխանակ ջուրերը ցածնալուն՝ աւելի շատ բարձրացեր են. անոր համար աս վերջի առեններ ջուրերը կըբարձրանարնէ, Թագաւորը բաւական կըսեպէր հանդէսով այցելու՛ երթալը իրենց գլխաւոր կուռքին ու կըօնի գլխաւորին. ուստի աս հանդէսը նոյն օրերը պիտոր ըլլար, անոր համար Թագաւորին հրամանովը շինեցին գետին եզերքին վրայ մէկ փառաւոր պատշգամմը քէօշկը՝ որ՟պս զի Փռանսըզին դեսպանը հոն կենայ և անկից սէյիր ընէ ամմէն բան հանգիստ:

Ան առաջ գետին մէջը երևցան 28
իշխան՝ իւրաքանչիւրը նստած մէյ մէկ նաւակի մէջ. աս նաւակներուն գմբեթները ներկած էր կարմիր գունով ու կերթային կոր կարգաւ գետին երկու
կողմէն. ասոնց ետեւէն ալ կուգային 54
ուրիշ նաւակ. ոմանց ներսի կողմը ոս-

կե-

կեզօծած էր, ոմանց ալ ծայրերը միայն. աս նաւակներուն մէջը նստած էին բոլոր Թագաւորական պաշտօնատէրները. նաւակներուն Թի քաշողները 30 էն մինչև 60 կը հասնէին՝ մէջի նստողին պատւոյն աստիճանին կէօրէ: Անոնց ետևէն կուգային կոր 20 նաւակ աւելի մեծ քան զառջինները, ու իւրաքանչիւր նաւակներուն մէջ տեղերը կար մէյմէկ փառաւոր աԹոռներ բոլորը ոսկեզօծած ու ծայրեր բրդաձև. ասոնց մէջը նստած էին Թագաւորական պահապանները՝ որոնց 16ը միայն ունէր ուԹսունական Թիավար գայըգճի, ու բոլոր Թիերը քիւրէկները ոսկեզօծած էր. ասոնց ետևէն կուգար կոր Թագաւորին նաւակը՝ որ ոսկեզօծած էր ներսէն ու դըրսէն. ասոր Թիավարները էին 120 հոգի ու գլուխնին դրած գտակները պատած խաֆըլանմըշ եղած էր զուտ ոսկիով, ու կուրծքերնուն վրայ զարդարված էր զանազան տեսակ ոսկի զարդերով: Թագաւորը նըստած էր աս նաւակին մէջ փառաւոր ամպհովանիի մը չարդախը տակ՝ հագված բոլոր ոսկիով գործած կերպասով դիպայով, ու չորս դիէն զարդարված էր ակունքներով ճէվահիրեղէն զարդերով. գըլուխը դրած էր Ճերմակ գտակ մը՝ որ նմա-

նմանապէս զարդարուած էր ոսկիով ու ամենազնիւ ակունքներով. արեգական ճառագայթները երբոր կըզարնէր ասոնց վրայնէ՝ հարիւր խաթ աւելի կըգեղեցկացընէր աս փառաւոր զարդարանքները՝ որ մարդը տեսնալով միայն կըրնայ իմանալ ։ Թագաւորին դրօշակապետը պայրախձի պաշէն գլխէն մինչև ոտքը ոսկիով զարդարուած կեցած էր ոտքի վրայ նաւակին էն ծայրը, ու բըռնած էր ձեռքը թագաւորական դրօշակը՝ որ էր ոսկի կարմիր կերպասէ. Թագաւորին աթոռին չորս կողմը երեսնուն վրայ ինկած կեցած էին չորս երևելի իշխաններ. Թագաւորին նաւակին առջևէն ու ետևէն կերթային կոր իբրև աւաջնորդ չորս ուրիշ նաւակներ ալ, բայց զարդարանքին կողմանէ քիչ մը ք̃ զթագաւորինը վար էին ։

Ը խամի ժողովուրդները՝ որ գետին երկու կողմը անհամար բազմութ̃ դիզւած էին սէյիր ընելու աս հանդէսը, երբոր հեռուէն տեսան իրենց Թագաւորը, ամէնքը ծունկ չոգեցան, ու ձեռվընին երեսներնուն վր̃ դրած ծռեցան, և ճակատնին գետնի վրայ դրած կեցան՝ մինչև որ անցաւ առջևնուն Թագաւորը, վասն զի Ը խամայինները աս

կերպ

կերպ կըսպարեէն հանդէսի մէջ իրենց Թագաւորը. Թ̃գրին նաւակին ետեւէն կուգարկոր 20 ուրիշ նաւակ ալ բոլորը գմբեթաւոր և թիերնին ոսկի զարդերով զարդարված. էն ետեւէն իբրև հանդէսը լըմընցընօղ կուգարկոր 16 նաւակ, կէսը ներկած կէսը ոսկեզօծած: Աս վերի ըսած նաւակներուն մէջ էն երկայնը էր 120 ոտք, իսկ լայնութիւնը 6 ոտք: Թագաւորը երբոր լըմընցուց իրեն գործողութիւնը կոքատունին մէջ, նորէն նոյն հանդէսով դարձաւ երթալու իրեն պալատը. Թագաւորը ճամբուն մէջ խոստացաւ մեծ ընծայ տալու ան նաւակի թիավարներուն՝ ով որ էն առաջ հասնի թագաւորական պալատին առջեւը. անատենը ամէն թիավարները ըսկսան եարըշ բռնել. բոլոր [illegible] մայրաքաղաքին ժողովուրդները, նմանապէս ուրիշ քաղաքներու ալ՝ ժողվերէին գետին եզերքին վրայ ու ամէնքը մէկ բերան կըկանչէին ուրախութ̃ ու սիրտ կուտային թիավարներուն. աս բազմութ̃ը շատնալ կեցերէին գետին եզերքը այնչափ շատ նաւակներով՝ որ ձեւացեր էր մէկ գիծ մը նաւակներէ գըրեթէ իրեք փարսախ երկայնութ̃:

Երբոր Թագաւորը կանցնէրկոր գե-

տին

տին մէջինն է , դրուած էին բոլոր տու-
ները ու անոնց պատուհանները , վո՛ր զի
ամմէնուն հրաման դնաց որ տուներնուն
դուրս ելլան , ո՛վ զի չիգտնըվի ուրիշ
մարդմը՝ որ բարձր ըլլայ ք̃ զԹ̃գրին կե-
ցած տեղը , վո՛ր զի աս բանը իրենց մէջը
մեծ կոպտուԹի̃ է ։ Թագաւորը ուզեց
որ իրեն նստած նաւակնալ սեպվի եա-
ւրշ բունօղներուն կարգին մէջ · և ո-
րովհետև Թ̃գրին Թիավարները բաղ-
մուԹի̃ էին ք̃ պմէկալներունը , ու ամ-
մէնքը հարիւրի մէջէ ընտրած կըտրիճ-
ներ , անոր համար շուտմը անցան քան
ղամմէնքը առաջ , ու մտան քաղաքը
յաղԹանակաւ , և այսպ̃ս ըմընցաւ հան-
դէսը ։

Ասոր ետևէն անցաւ վրայ 8 ը օր , ա-
նստէնը Թագաւորը առաւ իրեն Թա-
գուհին ու ուրիշ կընիկները ու գընաց
Լուօվօ ըսված քաղաքը որ հեռու էր
Ըխամէն 20 փարսախ՝ ուրտեղ կըկե-
նար միշտ տարուոյն 8 ը ամիսը , ու հիչ
չէր երևնար իրեն ժողովրդեանը · աս
ընելով ժողովըրդեան առջևը աւելի
յարգ կունենար , և զանոնք խաղաղու̃
մէջ կըպահէր · աս սովորուԹ̃ը ունին
ամմէն անտեղի Թագաւորները ։ Կօս-
տանԹին փոխարքան՝ որ դացեր էր Թա-

գաւորին հետ, խապար խըրկեց ութը մաթիմաթիգոս Ճիզվիթներուն որ իրենց աստղաբաշխական գործիքներով երթան իր քովը, անոր համար խրկեց երկու նաւակ ալ իրեն կահկարասիներուն էշէաներուն համար. մէկ ուրիշ նաւակ մընալ 24 թիով իրենց համար: Աս Ճիզվիթները Ձիմբայ ելլալէն ետև, երբոր երկու փարսախ քաղքէն հեռացաննէ, հանդիպեցան լայն դաշտիմը մէջ մէկ ազաւոր հանդէսիմը՝ որ ըսկսեր էին ընել Բերուցիներու կրօնին գլխաւորին մահուանը համար. ասոր մարմինը դրեր էին մէկ նաւապուտիծը մէջ՝ որ շինած էր անուշահոտ փայտէ (ինչպէս էօտ աղաճին), ու դրեր էին բարձր դիզած փայտերու վրայ ու կրակ տըվերէին. ասոր չորս կողմը տնկերէին չորս փայտէ մեծ սիւներ թէրէզներ ոսկեզօծած, և ասոնց վրայ տնկերէին մէկ մեծ բուրգմը. սիւներուն չորս կողմնալ շիներէին քառակուսի ու բարձր փայտէ աշտարակներ խուլէներ, ու վրանին փաթթած էին հատը թուղթ կոպիտ քաշվածքներով. աս բոլոր շէնքը մէջ առած էր փայտէ շինած քառակուսի պատով ու տնկած էին ասոր քէնարները աստին անդին ուրիշ փայտէ աշտարակներ ալ, իսկ չորս ան-

կեան

կեան քովերը եղած աշտարակները բարձր էին՝ սիւներուն վրայի եղած բուրգին երկայնութ̄ը , և ասոնք մէկզմէկու հետ միացած էին պզտիկ պզտիկ փայտէ շինած տուներով՝ որոնց վրայ քաշված էր ղանազան կերպարանքներ , մնշալի , կապկի , եղջիւրաւոր դոռոյնոուղլու սատանայի ևն ևն ։ Բոլոր Բէկուին քուրմերը ժողվերէին անտեղը . ամմէնքը ծանր ու պարկեշտ կերպով կեցած էին . երբեմն երբեմն կերգէին և երբեմն ալ երկայն ժամանակ լուռ կըկենային . ասոնց ետևը կեցած էին անհամար ժողովուրդ ՚ի պատիւ հանդէսին ։

Փուանսըրգները հանդիպելով այսպէս նոր ու անակնկալ տեսարանի մը , կեցան քիչ մը ժամանակ թէ ինչ գործղութ̄ի պիտոր ընեն . անատենը խելմը բազմութ̄ի ու քուրմերէն ըսկսան պարբռնել՝ չորս կողմէն բաց տաղաւարներու գօլխղաներու տակ . Փուանսըրգները ուրախնետև դեռ 5 փարսախ Ճամբայ ընէին պիտոր , անոր համար միայն հանդէսին ըսկիզբը տեսան՝ որ ամբողջ մէկ օրմը կըքըշէ ։ Շ խամայինները ու մէկալ անտեղի ժողովուրդները այնպէս կըսեն թէ որչափ որ մէկը աւելի փառաւոր հանդէս կընէ իր մեռելին վրայնէ , այնչափ

 կրօ-

կրօնասէր կըսեպվի, վո՛ր զի անոնց քուր-
մերը կըսորվեցընեն ժողովրդեան թէ
մէկը որչափ փառաւոր հանդէս ընէ ի-
րեն մեռելին մարմնոյն համար, այնչափ
դիւրութ՟ անոր հոգին կըտեղաւորէ մէկ
թագաւորի կմ՟ իշխանի մարմնոյն մէջը,
և կմ՟ մէկ երևելի անասուն կենդանւոյ
մարմնոյն մէջը. աս պատճառաւ Սիա-
մացիները այսպէս հաւատալով, ունեցած-
նին չունեցածնին կըծախեն՝ ո՛ր զի ան-
ըստակով փառաւոր հանդէս ընեն իրենց
մեռելին վրան:

Մաթիմաթիգոս Ճիզվիթները յաջո-
ղութ՟ ընելով իրենց Ճամբան հասան
Լօուվօ քաղաքը՝ որ շատ զուարճալի
տեսք ունէր և օդը մարդուս կենացը
շատ առողջարար. նոյն ատենը Ֆռան-
սըզին դեսպաննալ հոն գացեր էր, ա-
նոր համար թագաւորը ուզեց որ գայ
ներկայանայ իրեն առջևը խօսակցութ՟ի
ընելու. նոյն միջոցին մէկալ Ֆռանսըզ-
ները գացին սէյիր ընելու անառեղի թա-
գաւորական պարտէզները, և պալա-
տին դուրսի դին. աս պալատը որովհետև
շինված էր գետին եզերքին վրայ, շատ
աղուոր տեսք կուտար, մանաւանդ որ
շինված էր պզտիկ բլուրի մը վր՟. Ֆռան-
սըզներուն էն զարմանալի բանը երև-

ցաւ անտեղը եղած բնակարաններուն յարկը Ռ[illegible]ները՝ որ կըփայլէին ոսկիէ շինածիպէս , բայց ոսկի չէր , այլ էր մէկ տեսակ դեղին վէունիճիմը՝ որ երբոր արեգակին ճառագայթը վրան կըզարնէնէ , կըփայլի ոսկիիպէս , ու չիգիտցողին կարծիք կուտայ թէ ոսկիով շինած է ։

Թագաւորը հրամայեց որ նոյն իրիկունը զգեստանը ու իր հետ եղող ուրիշ Փռանսըզները հեծցընեն փիղերուն վրայ ու զբօսանք ընելու տանին ․ կար հօնտեղը մէկ ճերմակ փիղմը՝ որ իբրև մեծ բան մը տէի թագաւորը ցըցուցեր էր դեսպանին , վասն զի աս ճերմակ փիղը թէպէտ և պզտիկ էր մարմնով ու 300 տարվան էր , բայց մեծ յարգութի կուտային Հինտիստանցիները , ու Հինտիստանցի թագաւորները աս փիղը մէկզմէկու ձեռքէ առնելու համար շատ արիւնահեղ պատերազմներ ըրեր էին ։ Փիղին ծառայօղները էին խելմը երևելի իշխաններ՝ որ իրենց ձեռքովը կերակուր կուտային ու ջուր կըխըմցընէին ոսկիէ ու արծաթէ ամաններով , երկու մեծ տաշտ ըէյէն կար աս փիղին առջևը որ բոլորը թափցու ոսկիէ էր ․ իրեն կեցած ախոռը փառաւոր պա-

լա-

ղատիմը պէս շարդալած է , բոլոր վերի յարկը ոսկեզօծած զանազան զարդերով նախշուններով ։ Աւաշարը ինչպէս որ կըպատմէնէ՝ Թէփըրին էն պզտիկ փիղերը պիլէ ունին իւրաքանչիւրը տասնըհինգական մարդ՝ որ միշտ պէտք է որ քովերնին կենան ու ծառայեն անոնց ․ իսկ մէկալ մեծերուն քովը կայ 20 , 30 , 40 , իւրաքանչիւր փիղի աստիճանին ու պատուոյն կէօրէ ․ Ճերմակ փիղը միշտ 100 հոգի ունի իրեն քովը ծառայելու ։ Ինչպէս որ Լօսատանթին փոխարքան պատմերէնէ Փուանսըզներուն , Թագաւորը ունի եդէր 20,000 փիղէն աւելի իրեն տէրութե՛ը մէջ , բայց 'ի վայրենի ու չըբռնըված փիղերէն ։ Շիամայինները երբոր փիղ բռնելու համար որսի կերթանէ , կըբռնեն մէկ անգամով 50 , կամ 60 և երբեմն մինչև 80 ։ Որովհետև Փուանսայի գիտունեց Ճեմարանը յանձներէր աս Ճիզվիթներուն՝ որ քննենային Թէ ամէն փիղ ոտվըներուն մատերուն վըր ըղունկ Խանախ ունին մի , անոր համար Աւաշարը կըպատմէ Թէ հիչ մէկ փիղմը չիտեսաւ՝ որ չունենայ հինգ ըղունկ իւրաքանչիւր ոտքին հինգ մատին վըրայ ․ ատոնց ոտվըներուն մատերը այնչափ կարճ են՝ որ հազիւ Թէ կերևնայ ոտ-

վրներնէն դուրս ելած ։ Ընկաձներուն մեծութիւնը՝ շատ մեծ է համեմատութեամբ անոնց՝ ինչ որ կըտեսնանք պատկերքներու մէջ. աս փիղերու ակռաներուն մեծութիւնը ու գեղեցկութիւնը զարմանալի ու տեսնալու արժանի բան մընէ. շատ փիղեր կայ եղեր որ, ակռանին բերներնուն դուրս ելած է չորս ոտք երկայնութեամբ, ու վրան զարդարուած էր ոսկի, արծաթ ու պղինձ չէմպէրներով ։

Սիամ մայրաքաղաքէն մէկ փարսախ հեռու, թագաւորը ունէր գեղագնացութեան պալատ մը՝ շինուած գետին եզերքին վրայ, ուրտեղ կըպահէին մէկ ձերմակ կէնձ փիղ մը՝ որ որոշուած էր յաջորդ ըլլալու մէկալ ձերմակ ծեր փիղին՝ որ միշտ թագաւորին պալատին մէջը կըպահուի. աս կէնձ փիղին ծառայօղներնալ էին երևելի իշխաններ, և այնչափ յարգելի էր աս փիղը՝ որ տահա աւելի պատուելու համար զասի, փիղին մայրնալ ու մամնալ որ մէկ ախոռի մէջ կեցած էին՝ նոյնպս պատիւ ունէին. աս ձերմակ փիղը Փրանսըզները երբոր հոն էինէ մեծ էր մէկ եզան եօթն-ութը չափ. ու առաջ էր Կամպօյայի մէկ ուրիշ հնտստանի թգրի մը, և երկու տարի էր որ ընծայ խրկեր էր Սիամի թգրին՝

որ

որ իրեն օգնութի՛ զօրք խրկէ յաղթե-
լու համար ան ապստամբներուն՝ որ՝ Կօ-
չինչինի թագաւորին օգնականութե̄ վա-
զերէին իրեն վրայ պատերազմի համար ։
Կոստանթին փոխարքան մէկ օրմը խա-
պար խրկեց աս Մանթիմանթիգոս Ո՛իգ-
վիթներուն որ պատրաստ ըլլան թագա-
ւորին առջեւը ներկայանալու ․ Երբոր
ժամանակը եղաւնէ , առաւ զասոնք ու
անձամբ տարաւ թագաւորին պալատը ,
եւ անցուց զասոնք մէկ քանի մէջէ մէջ
սրահներէն՝ որոց երկու կողմը 'ի պա-
տիւ՛ թագաւորին երեւելի իշխաններ ե-
րեսի վրայ ինկած էին գետինը , ու տա-
րաւ էն ներսի խուցը՝ ուրտեղ տեսնը-
վէին պիտոր թագաւորին հետ ․ Հոնտե-
ղը կար մէկ Պարսկաստանի փռած խա-
լիմը՝ որուն վրայ Կոստանթին փոխար-
քան նստեցրնել տըվաւ աս Ո՛իգվիթ-
ները ․ ասոնք իրենց զգեստով էին ու
չորապնին ալ չէին հանած , որ մեծ ար-
տօնութե̄ ու պատուոյ նշան էր ․ վո՛ զի
ուրիշը թագաւորին ներկայանալու ըլ-
լայնէ՝ մասնաւոր զգեստ պէտք է որ
հագնի ու ոտվըները պէտք է որ բոպիկ
ըլլայ ։ Ո՛իգվիթները քիչ մը ժամանակ
մնտեղը ըսպասելէն ետեւ , եկաւ թա-
գաւորը իր խուցէն ու հեծաւ փիղին

վրայ՝ որ կըսպասէր կոր անմիջապէս խու-
ցին դուան առջևը վերի խալթը՝ որ եր-
թար պիտոր դեսպանին հետ սէյիր ը-
նելու երկու փիղերուն պատերազմը ,
բայց երբոր տեսաւ հոն աս Ճ'իզվիթ-
ները ըսկսաւ դալ դէպ 'ի անոնց դին .
թագաւորը քովերնին հասնելունպէս ,
Ճ'իզվիթներուն գլխաւորը բարև տը-
վաւ թագաւորին՝ մէկալներնալ անոր
հետ . թագաւորնալ անոյշ երեսով պատ-
մէնը մէկիկ մէկիկ բարևելէն ետև ը-
սաւ , իմացայ թէ ձեր թագաւորը ինչ
վախճանի համար խրկերէ ձեզ հոս ,
անոր համար ինչ բանի կարօտութի որ
կրնաք ունենալ՝ հրամայեցի որ տըրվի
ձեզի իմ թագաւորութէս . աս ըսաւ
ու ըսկսաւ երթալ քովերնուն , ու անց-
նելով ան սրահներուն մէջէն՝ ուրտեղ
երեսի վրայ ինկած էին իշխանները . հա-
սաւ պալատին առջի դուռը : Թագաւո-
րը ուզեց՝ որ Ճիզվիթներնալ գան իրեն
հետը սէյիր ընելու համար փիղերու պա-
տերազմին խաղը . աս պատճառաւ հրա-
մայեց Կոստանթին փոխարքան մէկ իշ-
խանիմը՝ որ զանոնք դուրս հանէ պալա-
տէն . ատոնք երբոր դուան առջևը հա-
սանին, տեսան որ իրենց համար պատ-
րաստված էր մէյ փիղ , ու վրանին շինած

էր

էր թախտըրաւանները ոսկեզօծ աթոռներով ու բանած բարձերով. Պ՛իզվիթները գացին կեցան մէյմէկ փիղի քով: Խաշառը կըստորագրէ հօստեղը՝ թէ ինչպէս կըհեծնէին անտեղը փիղին վրայ. Փիղին պահապանը որ միշտ նըստած է անոր վըզին վրայ՝ կառավարելու համար զանի, էն առաջ ծունկ չոքեցընել կուտայ, և վերջը կըհրամայէ որ պառկի մէկ կողմին վրայ. անատենը հեծնօղ մարդը մէկ ոտքը կըդընէ փիղին ոտվըներուն վրայ, մէկալնալ կըդընէ փորին վրայ, անատենը փիղը կամաց կամաց կըսկըսի շիտկըվիլ մինչև որ հեծնօղը հանգստութե՜ ելլայ նստի՝ կռնակը շինված աթոռին վրայ. աս կերպ հեծնալը աւելի յարգի է Հինտիստանցիներուն մէջ, վասն զի կան ոմանք ալ որ փիղին բարձրութե՜ սանդուխ ձըռաւէլէն կըդընեն ու վրան կելլան: Անտեղացիները ինչ ատտիձանի մարդ պիլէ ըլլայ՝ փիղին վըզին վրայ կընըստի. ինչու որ, աթոռով փիղին կռնակին վրայ նստիլը թագաւորին միայն պահված է, և կը՛ այնպիսի երևելի օտարականներուն՝ որ սորված չեն փիղի վրայ նստելու: Երբոր պատերազմ կը՛ որսի [illegible] կերթանակ աս փիղերը, մէկը վըզին վ՛ր կընստի, մէկ-

մընալ ետեւի ոտըներուն վրայ կընստի · մէկ իշխանմընալ կըկենայ կըռնակին վրայ ձեռքը տէգ մը ծըրարծը բըռնած ։

Թագաւորը իրեն մարդիկներով ու միսաֆիրներովը ելաւ գնաց մէկ մեծ դաշտ մը՝ որ քիչ մը հեռու էր քաղքէն · Փռանսըզին դեսպանը Թէմպո եւ կեցեր էր Թագաւորին աջ կողմը, բայց 20 քայլի չափ հեռու էին մէկզմէկէ ։ Կօստանթին փոխարքան ալ կեցեր էր ձախ կողմը · Թագաւորին փիղին ոտըներուն տակը խել մը երեւելի իշխաններ երեսի վրայ ինկած էին ՚ի պատիւ Թագաւորին ։ Երբոր ամմէն բան պատրաստ էր, ըսկսան փող չալել · անատենը ան երկու փիղերը՝ որ որոշված էին պատերազմելու համար, ըսկսան զարհուրելի ձայնով մը կանչել · աս փիղերուն ետեւի ոտըներուն վրայ հաստոր չուվաններ կապեր էին ու շատ մարդիկներ մէկալ ծայրէն բռնած էին, ով կի Թէ որ սաստիկ տաքնայ պատերազմընէ քաշելով բաժնեն մէկզմէկէ · էն առաջ այնպէս կերպով կըԹողուն աս փիղերը՝ որ երբոր մէկըզմէկու մօտենանին ակռայ ակռայի մէջ մտնայ առանց մէկզմէկ վնասելու, բայց ՚ի վերայ այսր ամի երբեմն այնպէս սաս-

տիկ

տիկ կատաղութե՟ կըմօտենան մէկզմէ . կու՝ որ մէկ անգամ զարնըվելուն կըփըրթի ակռաներն արմատէն , կի՛ ամէն անգամ մէկզմէկու զարնելուն՝ կըտոր կըտոր կըփըրթի ակռաներնուն վրայէն ու խեղճը բարձր կըցաթկէ . նոյն օրը աս փիղերուն պատերազմը կարճ.քշեց , վասըն զի այնպէս հրամայեր էր թագաւորը . ինչու որ թագաւորին գլխաւոր վախճանը էր որ նոյն հանդեսէն վերջը ընծայ տար պիտոր ամմէնուն առջեւը Պարոն Ս օտրիք ըսւած Փռանսըզին՝ որ իր դեսպանները տարեր էր ուրիշ անգամ և նորէն ալ տանէր պիտոր Փռանսա . անոր համար խաղին տեսարանը լմըննալէն ետև , թագաւորը գընաց մօտեցաւ աս պարոնին ու իրեն ձեռքովը տըվաւ մէկ սուր մը՝ որ կոթը էր բոլոր թափցու ոսկիէ , ու պատեանը խրճը ազնիվ պաղայէ . չորս դին զարդարած ոսկի զարդերով . վրան կար մէկ շղթայ զնձիւ մընալ՝ նոյն սուրը մէջքը կապելու համար՝ նըմանապէս բոլոր ոսկիէ . ասոնցմէ զատ ընծայեց մէկ ձեռք զգեստ մըն ալ ոսկի կերպասէ՝ բոլոր կոճակները թափցու ոսկիէ : Ր. յապլոփ սուրը կուտար ( խամի թագաւորը միայն իրեն էն մեծ սպարապետին «սէրասքէրին» , երբոր կըբաժնը-

մէր Թագաւորին քովէն պատերազմ եր-
Թալու ։ Փռանսըզները մէկ անգամըն-
նալ գացին Թագաւորին հետ սէյիր ընե-
լու պատերազմիլը փիղերուն վագրնե-
րու խաչլաններու հետ , և Ճիզվիթներ-
նալ հետը գացին միշտ փիղի վրայ հե-
ծած , ո՞չ կի չիգայթակղեցընեն տէի
անատեղի քուրմերը՝ ձիու վրայ հեծնա-
լով , ինչու որ անոնք ձիու վրայ հեծնա-
լը մեծ մեղք կըսեպէին ։

Դաղքէն դուրս կար մէկ լայն դաշտ-
մը՝ որուն չորս դին բարձր ցիցերով
պատնէշ քաշեր էին ․ դաշտին մէջը Թո-
ղուցեր էին իրեք փիղ՝ որ պատերազմէ-
ին պիտոր մէկ վագրի մը դէմ․ խուրաքին-
չիեր փիղի երեսներուն վրայ անցուցեր
էին մէյմէկ սուռաթիպէս բաներ՝ որ
կըծածկէր բոլոր գլուխը ու մէկ մասը
խօրթումին ․ երբոր ամմէն սէյիրճինե-
րը տեղաւորվեցան իրենց տեղերը , վագ-
րը դուրս հանեցին իրեն ախոռէն , որ-
ուն թէ՛ ձևը , թէ գոյնը , թէ հաստու-
Թիւնը նման չէր ամենևին ան վագրե-
րուն՝ որ աս Փռանսըզները տեսերէին
Փռանսա , և կիմ ուրիշ հասարակ վագ-
րերու ․ մէկէն չիԹողուցին զասի որ
վազէ փիղերուն վրայ , այլ երկու կող-
մէն չուվաններով կապած բռներ էին ․

փի-

փիղերուն մէկը մօտեցաւ աս վագրին քովը , և իրեն խօրթումովը իրեք անգամ այնպէս ուժով զարկաւ վագրին կռնակին վրայ՝ որ վագրը մէկէն գետինը կըլօրտուեցաւ , և ամմէն սէյիրճիները կարծեցին թէ մեռաւ . անատենը երբոր վագրին վրայէն չուվանները քակեցինին զարհուրելի ձայնովմը սկսաւ կանչել աս վագրը , ու վազեց ան փիղին խօրթումին վրայ՝ որ իրեն վրայ կուգարկոր զարնելու համար . անատենը փիղը բոլոր իրեն խօրթումը ներս քաշեց ու ակռաներով զարնելմը զարկաւ՝ որ խելմը բարձր վեր ցատկեց , ու անկից ետև սաստիկ վախէն , ալ չէր համարձակեր վազել փիղերուն վրայ . անատենը փիղերը միաբան վազեցին վագրին վրայ ու այնչափ ծեծեցին իրենց խօրթումովը՝ որ հելլաք եղաւ մնաց վագրը , և անտարակոյս կըսպաննէին զանի՝ թէ որ Փըռանսըզին գեսպանը չիխնդրէր թագաւորէն ազատուիլը աս վագրին ։ Էրթէսի օրվան իրիկունը փառաւոր լուսաւորութիւն ըրին թագաւորին պալատը 2000 ճրագով , ջահերով , բայց այնպէս գեղեցիկ կարգով ու ձևով շինած շարած էր , որ զարմացուցին Փռանսըզները , և նոյն ատենը կըչալվէրկոր նաև

նուագարաններ ալ ։

Աստանթին փոխարքան ցըցուց ա- Ճիզլիթներուն իշխան ըսուած փիղը, որ էր գեղեցիկ ու չափաւոր մեծութ̄ փիղ- մը․ ասոր անունը անոր համար կըսուի իշխան փղերու, վն̄ զի ծներ էր նոյն օրը՝ որ օր ծներ էր նոյն ատենվան Սիա- մի Թագաւորը․ նմանապէս տեսան Թա- գաւորին պահապան փղերը որ կըկե- նային Թագաւորին մօտիկ, և ամէն օր մէկ անգամմը կըփոխվէին պահապան զինուորներուն պէս, և ասոնք միշտ գիշեր ու ցորեկ պատրաստ կըկենան Թագա- ւորին ծառայելու համար ։ Սիամի Թա- գաւորը յայտնեց իրեն բաղձանքը Ֆը- րանսըզի դեսպանին ըսելով Թէ կու- զեմ հոն դըտնըվիլ երբոր ձեր աստղա- բաշխական գործիքներով քննուի ընեք- նէ լուսնի խաւարմանը վրայ․ աս վախ- ճանիս համար Թագաւորը տըվաւ աս մա- Թեմաթիգոսներուն իր տուներէն մէ- կը՝ որ կըսուէր Թէլէէ Բօօսօօնէ որ հե- ռու էր Լօուէն դէպ ՚ի արևելեան կող- մը մէկ փարսախի չափ, և մօտ ա՛ն ան- տառին՝ ուրտեղ միշտ կերթար Թագա- ւորը որսալու համար վայրենի փղեր ։ Թագաւորը մէկ օրմը հրաւիրեց դես- պանը իրեն ընկերներով՝ որ երթան ի- րեն

րեն հետը ու սէյիր ընեն ան լուսաւո-
րութիւնը որ կըլլայ վայրենի փիղ որսա-
լու համար ։

Մէկ գունդ մը որ կըբաղկանար 26 հզր հոգիէ , անտառներուն մէջ՝ լեռնե- րու վրայ ձեւացուցին մէկ մարդով քաշ- ված երկայն քառակուսի պատնէշ մը՝ ո- րուն երկայն կողմերուն երկայնութիւնը էր 10ը փարսախ , իսկ լայնութիւնը կող- մերունը իրեք փարսախ . աս միջոցին մէջ երկու կարգով գետնէն բարձր կը- րակներ վառեր էին հինգ ոտք մէկզմէ- կէ հեռու , և բոլոր գիշերը նոյն կրակը վառած պահեցին անտառին փայտերո- վը , վասն զի երբոր լուսնարնէ անտառե- նը որսայէն պիտոր մէջի եղած փիղերը ու ուրիշ կենդանիները . մէջ մէջ տե- ղերը վառեր էին մեծ ջահեր ալ՝ որ ի- մացընեն մէկզմէկու թէ ան տեղվան- քը կեցած են խումբ խումբ մարդիկներ ու իրենց գլխաւորով ու խեղճինալ պա- տերազմող փիղերով , և երբեմն երբեմն պզտիկ թօփեր ալ կընետէին , որպէս զի ա- նոնց ձայնով ու կրակով վախցընեն մէ- ջի եղած վայրենի փիղերը որ անկից չի- փախչին , զէրէմ այսպէս չընէին նէ՝ բոլոր մէջի եղած փիղերը կըփախչէին , ինչպէս որ փախան մէկ լեռանմը վրայ՝ որ էր

աս

աս մարդով քաշած պատնէշին մէջ, որ սաստիկ դար ու վար ուշուրում ըլլալուն պատճառաւ՝ հոգ չունեցան աս պատրաստութիւնները հոն ալ ընելու, կարծելով թէ փիղը՝ որ այնչափ մեծղի հաստուկ կենդանիմը ըլլալով, չիկրնար այնպիսի տեղերէ քալելով փախչիլ. բայց որովհետև վերջի ձիգը ոտքը՝ կենդանիներուն շատ վարպետութիւն բանեցընել կուտայ, այսպէս ալ հոս 12 փիղ տեսնալով թէ բռնըվլին պիտոր, կարծես թէ խելք բանեցընելով ելան ան լեռանը ծայրը ու անկից անտառներու մէջ փախչելով խալըսեցան. աս փիղերը երբոր լեռան տակը հասաննէ, երկնցուցին իրենց խօրթումները ու պըլլեցին մէյմէկ ծառերու վրայ և այսպէս կամաց կամաց քաշելով իրենք զիրենք ելան լեռան վրայ, նորէն երկնցուցին խօրթումնին ու պըլլեցին անկից վեր մէկ ուրիշ ծառիմը և ելան քիչմը տահա վեր. այսպէս մէկ ծառէ մէկալ ծառը պըլլելով խօրթումնին ելան մինչև լեռան գագաթը ըէտէն ու փախան:

Երբոր որսին ամմէն պատրաստութիւնները լմընցանէ, Փռանսըզները ըրին մէկ փառաւոր նախաճաշիկմը մէկ զուարճալի տեղմը կեցած՝ որուն չորս կող-

կողմը կըրակ վառեր էին ու կեցուցեր էին պահապան պատերազմող փիղերէն , ոպ̃ զի անտառին մէջ եղած մարդակեր գազանները վնասը չի հասցընեն Փըռանսըզներուն . և անկից վերջը Կօստանթին փոխարքան ասոնց հետ ճամբայ ելաւ երթալու համար նոյն պալատը՝ ուրտեղ առաջուց գացեր էր Թագաւորը սէյիր ընելու համար լուսնին խաւարումը , վս̃ զի նոյն գիշերը լուսինը խաւարէր պիտոր . մտան ասոնք Թագաւորական նաւակին մէջ՝ որ կըսպասէր կոր անտեղը եղած գետին եզերքին վրայ , որուն երկու դին զարդարված էր անհամար վառած կրակներով . երբոր կէս փարսախ մընաց հասնելու Թագաւորական պալատին , Թիավարները որ մինչև անատենը սաստիկ ուժով կըքաշէինէ , անատենը ըսկսան այնպէս կամաց քաշել՝ որ գրեթէ և ոչ Թիերուն ձայնը կըլսվէր , ու իմացուցին Փռանսըզներուն որ կա՛մ դադրին խօսելէն կմ̃ խիստ շատ կամաց ձայնով խօսին ։ Երբոր յամաք ելան ասոնքնէ , տեսան որ կեցեր էին շատ իշխաններ բոլոր իրենց զինուորներով , բայց այնպէս լռութիւն [illegible] էր՝ որ մարդ կըկարծէր թէ մէկ անմարդաբնակ անտառի մը մէջ էին ։

Փը-

Փառասէրները մէկէն անկեցին իրենց գիտակները տէրվիշները ու ուրիշ աստղաբաշխակին գործիքները, ու նորէն նաւակ մըտան գացին Կոստանթին փոխարքային տունը՝ որ քիչ հեռու էր Թագաւորական պալատէն՝ քիչմը հանգչելու համար, զէրէմ լուսնի խաւարումը ըլլալու դեռ ատեն պէտք էր. երկու սահաթի չափ հոն հանգչելէն ետև ելան գացին ան տունը՝ ուրատեղաց որ սէյիր ընէին պիտոր լուսինը: Ըս մաթիմաթիգոս Ճիզվիթները հոնտեղը հասնելնունպէս պատրաստեցին մէկ աղէկ գիտակմը հինգ ոտք երկայնութը մէկ պատուհանիմը վրայ, և երբոր եղաւ ճիշտ ժամանակը խաւարման, խապար տըվին Թագաւորին, անալ շուտմը եկաւ նոյն պատուհանին առջևը. մաթիմաթիգոսները յարգութը Թագաւորը բարևելէն ետև, ըսկսան իւրաքանչիւրը իրենց գործողութիւնը ընել:

Թագաւորը շատ հաճեցաւ հազ ըրաւ երբոր պայծառ տեսաւ լուսնին բիծերը շիշէները գիտակին մէջ. մանաւանդ երբոր ցըցուցին Թագաւորին նոյն լուսնին բիծերը թղթի վրայ՝ որ քաշած էին Փարիզի աստղաբաշխական աշտարակին կուլէին մէջը: Ըստատենը Թագաւորը

հար-

հարցուց ասոնց թէ ինչու համար լու-
սինը թէլըս կերևնայ դիտակին մէջ, և
թէ ինչու լուսնին խաւարած մասնալ
կերևնայ, և թէ նոյն ատենը սահաթը
քանին է Փարէզին մէջ, և թէ ինչ օ-
գուտ կըլլայ այսպէս հեռու տեղերը
աստղաբաշխական քննութիւներ ընելով
ևն ևն ։ Արբոր Պէզլիթները տեղնի տե-
ղը պատասխան տալով կըմեկնէին կոր-
նէ թագաւորին, ներս մըտաւ թագաւո-
րական պաշտօնատէրներէն մէկը թէվ-
սիմը ձեռքը բռնած, որուն մէջը կար
եօթը փառաւոր պգեստ աղնիւ կերպա-
սէ ազնլաղէ՝ որ թագաւորը ընծայ տըվա-
ւս մաթիմաթիգոսներուն ։

Այն լուսնին խաւարումը առաջուց
ըսեր էր մէկ Չինացի քուրմմընալ,
բայց մէկ քառորդ սխալելով. և ըսեր
էր թէ լուսինը խաւարմանէ չիխալըսիր
մինչև որ արեգակը չելլանէ՝ որ ամենև-
ին անորներհակը եղաւ ։ Թագաւորը զար-
մացաւ թէ ինչպէս հիսապ ընելով գը-
տերէ լուսնին խաւարումը, և կուզէր ի-
մանալ անկից, բայց որովհետև Չինա-
ցւոց լեզուն աղէկ չէր գիտեր չիկըր-
ցաւ աղէկ տեղեկանալ. բայց հետևցուց
թէ աս քուրմը ուրիշ քուրմերունիս չի-
բացատրեր պատւավական առասպելով,

գէ-

զէրէմ մէկալ քուրմերը ժողովրդեան կըբացատրեն ատ հետևեալ կերպով լուսնին խաւարումը . լուսնին քովերը կըպըտըտի եղեր միշտ մէկ վիշապմը աժդէրմը , ու երբոր կանօթենայնէ՝ կըկըլլէ եղեր ու ետքը նորէն դուրս կըհանէ . այսպիսի կարծիք ունեցողներուն առարկեցին Փռանսըզները ըսելով , հապա ինչպէս կըլլայ որ Եւրոպայի մաթեմաթիգոսները առաջուց կըսեն խաւարման վայրկեանը [illegible] , մեծութիւը , և երբեմն բոլոր լուսնին խաւարիլը կամ կէսը , և թէ որչափ տևէ պիտոր . անատենը պատասխան կուտան Իսլամցիները , թէ նոյն վիշապը ունի որոշեալ կերակրոյ ատեն , և Եւրոպացիները գիտեն ուտելուն սահաթը և ախորժակին [illegible] բացութիւնը , երբեմն շատ , երբեմն քիչ , և այսպէս ըլլալով տեղնիտեղը կըմակաբերեն ։

Զարմանալու չէ որ այսպիսի պատաւական առասպելներու կուտան ու հատատ միտքերնին կըդընեն թէ այնպէս կըլլայ . ինչու որ , մէկ ազգմը երբոր տգիտութեան մէջ ծներէ ու տգիտութեան մէջ մեծցերէնէ՝ չուզեր թողուլ ամենևին իրեն տգիտական կարծիքները . ու ինչ որ լսերէնէ մէյմը՝ չի դառնար քններ թէ արդեօք իրաւ է թէ առասպել է , ու

այս-

այսպիսիններուն ճշմարիտը ըսելէ ուզես սորվըցընելնէ քու ըսածըդ առասպել կըսեպեն :

Երբոր առաւօտ եղաւնէ թագաւորը ուզեց որ աս մաթեմաթիգոսները երթան իրեն հետ փիղ որսալու տեղը՝ ուրտեղ առջի գիշերվընէ պատրաստերէին՝ փիղերը որոգայթի մէջ ձգելու , ինչպէս որ վերը պատմեցինք : Ասոնք թագաւորին հետ միասին անտառներուն մէջ , ու գացին մօտեցան ան շինուածքին՝ որուն մէջ փախուցեր էին վայրի փիղերը , և ասոր չորս կողմէն քաշերէին հաստը ցիցերով պատնէշմը , բայց տեղ տեղ ծակ թողուցերէին , և ան իւրաքանչիւր ծակերուն առջեւը կայնեցուցերէին տասնըչորսական պատերազմօղ փիղեր՝ որպէս զի թէ որ վայրի փիղերը անկից ուզենան փախչիլնէ՝ պատերազմելով դէպ ՚ի պատնէշին մէջը վռնտեն : Թագաւորը իր ընկերներով հոն հասնելունպէս , պատնէշին մէջը խօթեցին 12 ընտանի ու շատ ուժով փիղեր՝ որոց վրը հեծեր էին շատ մարդիկներ . ասոնց ամմէնուն ձեռքը կար հաստը չուանով շինած քալուկ իւմէկներ , ու չուաններին մէկ ծայրնալ կապած էին առաջուց իրենց հեծած փիղերուն վրայ : Վայրի փիղերը երբոր տե-

սան թէ ետևնուն ինկեր են , մէկէն դուրս ելան շինվածքին մէջէն ու ըսկսան վազելով երթալ դէպ 'ի ան պատնէշին կողմը՝ ուրտեղ ճամբայ կար դուրս ելլալու , բայց պատերազմող փիղերը որ կեցեր էին ան ծակերուն առջևը՝ մէկէն ներս վռնտեցին նորէն . ան միջոցին մէկալ փիղերուն վրայ եղած մարդիկները այնպէս արագութ̃բ ու վարպետութ̃բ ձգեցին իրենց ձեռքը եղած իլմէկները նոյն տեղը՝ ուրտեղ վայրի փիղերը կոխէին պիտորնէ , որ առանց վրիպցունելու ոտվըները իլմէկին մէջը առին ու սաստիկ սըխմեցին՝ որ ալ չէր կրնար քալել , և պատնէշին մէջ որչափ փիղ կարնէ բռնեցին ամմէնը մէկ սահաթվան մէջ ։

Սիամացիները երբոր կուզեն ընտանեցընել վայրի փիղերընէ , կըկապեն երկու ընտանի փիղի մէջ և այնպէս կըթողուն 15 օր , և անկից վերջը կըգործածեն ուզածներնունպէս . աս բռնըված փիղերուն մէջ կար իրեք հատ պզտիկ ձագ փիղեր , անոր համար թագաւորը դարձաւ ըսաւ դեսպանին թէ Պօուկօյնի Փռանսայի դուքսին խրկեցի մէկ փիղմը , բայց որովհետև Անժուի դուքսնալ կըփափաքի ունենալ մէկ հատմը ,

անոր համար անոր ալ կըխըրկեմ մէկ պզտիկմը , ո՛վ զի աս երկու իշխանը չինախանձէին մէկզմէկու վը՞ր ։ Աս ամմէն բաներէն վերջը Փռանսըզլին դեսպանը ուզեց Ճամբայ ելլալ ու դառնալ Փռանսա , անոր համար Ը խամի Թագաւորնալ երկու դեսպան ՝ընտրեց որ իրեն կողմանէ երթան Փռանսըզլի Թագաւորին քովը , և առջի հոն եղած դեսպանները ետ դառնան ․ Փռանսըզլին դեսպանը իրեն հետ եղած մարդիկներով նորէն Ճամբայ դրին այնպիսի փառաւոր հանդէսով՝ ինչ՟պս որ գալու ատենը ընդունեցաննէ ։

Մէկ քանի ուրիշ գերեզմաններ՝ որ հանած է նոյն Թաշառին ըրած երկրորդ ճամբորդութենէն դէպ ՚ի Սիամ։

Սիամի Թագաւորը տեսնալով առջի Ճիզվիթներուն գիտունները ու մարիֆէթները՝ որ ցըցուցին իրեն առջեւը, խրկեց նորէն Թաշառը Փռանսա որ երթայ իրեն կողմէն աղաչէ Լուիճի 14երորդ Փռանսայի Թագաւորէն, որ նորէն խըրկէ իր քովը 12 մաթիմաթիգոս Ճիզվիթներ. Թէ՛որը յանձն առաւ կատարելու Սիամի Թագաւորին ուզածը. անոր համար երբոր Սիամի Թագաւորին առջի դեսպանները՝ ճամբայ ելլային պիտոր Փռանսայէն Սիամ երթալունէ, անոնց հետ դըրաւ աս 12 Ճիզվիթները։ Ասոնք Փռանսայէն ճամբայ ելան վեց նաւով, ու գացին հասան Գլուխ բարեյուսոյ. աս մաթիմաթիգոսներուն յանձնըված էր Փռանսայէն որ քննեն Թավօլա ըսված անտեղի լեռը, վ՛ո վի ուրիշներուն ըսածին կեօրէ կըկարծէին թէ ատենօք ան լեռը ծովի ջուրով գոցված էր, անոր հ՛մր կըյուսային թէ ան լեռանը վրայ շատ խեցեմորթներ կամ քարացած ձուկներ գըտնըվի։ Երկու Ճիզ-

Ղիգվլիթ յանձն առին երթալու քննելու, ու միանգամայն գտնալու նոր տեսակ բոյսեր Փէրտաններ ու խոտեր ։ Ղիգվլիթները առին իրենց հետ առաջնորդ երկու հոգի ու գացին լեռան տակը ․ հասնելը տեսան որ լեռանը չորս կողմէն հեղեղիպէս «Հըլէպէ» ջուր կըվազեր ․ և այս վազած ջուրերը լեռան տակը ձևացուցերէին մէկ գետմը , ու հոն ժողված անկից ուրիշ տեղ կըվազէին , բայց խելմը ջուր ալ հողին մէջ կըկորսըվէր ․ այս վազած ջուրերը չունէին լեռան վրայ մէկ ըղխելու մասնաւոր տեղմը , այլ լեռը շատ բարձր ըլլալով, արեգակին ճառագայթներէն սաստիկ կըտաքնար գագաթը , անոր համար երբոր ամպերը վրայէն կանցնէին , լեռանը սաստիկ տաքուէն անձրև կըդառնային , ատոր համար է որ լեռանը չորս կողմէն ջուր կըվազեր ։ Ասոնք ըսկսան կամաց կամաց լեռանը վրայ ելլալ , և որչափ վեր կելլային կըլսէին մէկ աղաղակ մը կապիկներու , և միանգամայն վարէն վեր ելլողներուն վրայ խոշոր խոշոր քարեր կըկըլտորցընէին՝ որպէս զի արգելէն անոնց վեր ելլալը ։ Ղիգվլիթներուն առջևէն գացող առաջնորդները՝ որովհետև այնչափ բարձր չէին ելած նոյն լե-

լեռանը վրայ , ըսկսան վախնալ իրենք ,
ու վախցընել մէկալները՝ ըսելով թէ
լեռան ծայրը առիւծէն ասլանէն մեծ կեն-
դանիներ կան որ մարդը ողջ ողջ կու-
տեն . Ճիզվիթները ասոնց աչքէն ու ե-
րեսէն իմացան թէ կըսէնկոր ան խօս-
քերը իրենց սաստիկ վախէն , անոր հա-
մար սիրտ տալով անոնց շարունակեցին
իրենց վեր ելլալը ու շատ աշխատանքով
հասան լեռան ծայրը՝ ուրտեղ կեցած
էին անհամար կապիկներ , որոնք տես-
նալնուն պէս աս մարդիկները ծակէծակ
փախչելով կորսըվեցան գացին ։ Լեռան
էն վերի գագաթը շիտակ դաշտիմըպէս
էր , որուն կլօրութիւնը կար մէկ փարսա-
խի չափ , և բոլորը քարաժայռ էր . աս
դաշտին մէջ տեղը քիչմը խորունկկէկ
էր ու կըբըղխէր մէկ ջուրմը , բայց աս
ջուրը՝ ինչպէս որ հաւանական կերևնայ-
նէ՝ եկած է մէկալ ծայրերէն՝ որ քիչ-
մը բարձր էին քան զմէջ տեղը ։ Աս լե-
ռանը վրայ ինչ նոր բան որ կըյուսային
գըտնալունէ չիգըտան , անոր համար
նորէն վար ինջան ու մըտան նաւը և
ճամբայ ելան անկից . երբոր հասան
Մինա ըսված դետին բերնին առջևը
(որ է Շխամի թագաւորութեան մէջ) եր-
կաթ նետեցին ։

Որովհետեւ Փռանսայէ դարձած Սիա-
մի Թագաւորին դեսպանները իշխանին
խըրկեցին իմացընելու համար Թա-
գաւորին՝ իրենց հասնիլը , Փաշառնալ
գնաց անոր հետ . աս խըրկըւածը Թէ-
պէտ և էր հասարակ իշխաններէն մէկը ,
բայց որովհետեւ ներկայացերէ եղեր մէկ
անգամմը Թագաւորին , անոր հ՟ր ամ-
մենուն առջեւը պատիւ ունէր . երբոր
աս իշխանը քաղաքը հասաւնէ , ամմէն
երեւելի մարդիկները նոյն տեղին՝ եկան
բարեւելու զասիկայ . նոյն ատենը Փա-
շառնալ Սիամայիններուն լեզուով հար-
ցուց Թագաւորին առողջութիւնը , ինչպ՟ս
է սովորութ՟ի Եւրոպայի ու ուրիշ տե-
ղերուալ , որ կ՟ն առաջ մարդուն առող-
ջութիւնը կըհարցընեն . աս հարցմունքը
ընելէն ետև , մէյմընալ տեսաւ՝ որ ամ-
մէնքը զարմանալով իր հարցմունքին վ՟ր
մէկըզմէկու երես ըսկսան նայիլ ու հիչ
մէկը պատասխան չիտըրւաւ : Փաշառը
կարծելով թէ պէտքի աղէկ չիկըրնալով
բացատրել Սիամացիներուն ոճին կեօ-
րէ , անոր հ՟ր մէկ ուրիշմընալ թարգ-
մանել տըւաւ նոյն բանը , բայց կէնէ
հիչ մէկը պատասխան չիտըրւաւ , վ՟ս կի
Սիամացիները ամենեւին չէին համար-
ձակեր իրենց Թագաւորին անունը բե-

րան առնուլ ։ Ուաշարը երբոր Լուվօ գնացնէ պատմեց Կօստանթին փոխայքային թէ սանկ բան հարցուցի և ամմէնքը շփոթած հիչ մէկը պատասխան չիտրվաւ ․ ի՛նչ է ասոր պատճառը ․ անալ պատասխան տրվաւ թէ Ճինացինե-րուն սովորութե̃ը դէմ է , և սա̀ստիկ հրամանաւ արգելված է՝ որ հիչ մէկը չիկըրնար հարցընել իմանալու համար թագաւորին առողջութե̃ը վրայ ․ և թէ շատ մարդ կայ որ և ոչ թագաւորին անունը գիտեն , և անոնք որ գիտեննէ՝ չեն համարձակիր բերան առնելու , վ՞ս զի միայն կ՛ն երևելի թագաւորական իշխանները կըրնան յիշել ․ ինչու որ Ճինացինե-րուն մէջ թագաւորին անունը մէկ խորհրրդաւոր սրբապան բանմընէ ․ սաստիկ արգելված է՝ որ թագաւորական պալատին մէջ ինչ կըլլայնէ դուրսը չիհրատարակվի ։ Մ՝էկ օտարականմը թէ որ կուզէ իմանալ թէ թ՞րը ու իր իշխանները ողջ են , պէտք է հարցընել թէ մէկ խռովութի՛մը ելած է պալատին կա՛մ թագաւորութե̃ը մէջ , թէ որ պատասխան տան թէ չէ , անատենը կիմացվի որ դեռ նոյն թագաւորնէ և նոյն պալատական իշխանները ․ թէ որ թագաւորը մեռնինէ անատենը ամմէնքը թագաւո-

րին

րին անունը կըրնան յիշելու համարձակ խօսիլ վրան ։

Սիամի Թագաւորին դեսպաններուն հրաման եղաւ որ ցամաք ելլան . ասոնք մէկէն գային Կօստանթին փոխարքային քովը՝ իմանալու հմր անկից Թէ երբ ներկայանան պիտոր իրենց Թգւորին՝ համար տալու իրենց տեսածներուն ու ըրածներնուն վրայ . մ՟ն կի Եւրոպայէ դառնալէն ետև մինչև չիտեսնըվին իրենց Թգւորիննէ՝ չեն կըրնալ երԹալ իրենց ընտանեաց քովը . աս դեսպանները չէ Թէ միայն իրենց դեսպանուԹէ ետ դառնալու ատեն կըպահեն աս կանոնը, այլ և երԹալու ատենն ալ կըպահեն , գերէմ երբոր կընտըրվին ասոնք ուրիշ Թագաւորիմը քով դեսպան երԹալու՝ իրենց Թգրին կողմէննէ , անատեննալ չենկըրնար դառնալ իրենց տունը՝ Թէպէտ և ուշանայ երԹալնին ։ Նմանապէս երբոր կըհասնին իրենց դեսպանուԹէ տեղընէ , մինչև որ անտեղի Թագաւորին հետ չիտեսնըվիննէ՝ չեն կըրնար մըտնալ հասարակաց հանդէսներու մէջ ։ Աս Փռանսայէն եկող դեսպանները երբոր ներկայացան Կօստանթին փոխարքայիննէ , մէկէն երեսներնուն վրայ ինկած երկըրպագուԹի ըրին ու հարցու-

ցին թէ թագաւորը ու զինքը կըրցերեն
հաստեցընել իրենց պաշտօնին մէջ. ա-
նալ պատասխան տըվաւ թէ հաճէ են,
և ետքը հարցուց թէ ինչ բաներ տեսան,
և թէ ֆռանսըզի թագաւորին վըայ ինչ
համարում ունին. անատենը դեսպան-
ները պատասխան տըվին [illegible]
[illegible] թէ ֆռանսայի մէջ տեսանք
հրեշտակներ ու ոչ եթէ մարդիկներ, և թէ
ֆռանսան չէ թէ էր մէկ թագաւորու-
թիւմը այլ մէկ մեծ աշխարհքմը. և մե-
ծագործութե, հարստութե ու քաղա-
քավարութե կողմանէ մի միայն են. իսկ
ֆռանսըզի թէգրին վըայ գովասանք չի-
մընաց որ չըսեն։

Ճիզվիթները ըսեր էին թէ կայ ան-
տեղվանքը աղէկ երկաթի հանգեր, ա-
նոր համար գացին քննելու։ Կար մէկ
գեղմը՝ որ կըսվէր Պօն-Սօան, որուն մէ-
ջը կար 10 կամ 12 տուն միայն. աս գե-
ղին շըջանակները բոլոր երկաթի հան-
գեր են, և շինած է մէկ դարբնոցմը չէ-
չէնիքէ խանութմը՝ որուն մէջը անտեղի
բնակիչները պարտական են դնել ամ-
մէն տարի 125 լիպրէ երկաթի հանգ.
աս խանութին մէջ կար 3 օճախ որուն
մէջը կըլեցընեն երկաթները, ու վըան
հանգային ածուխ [illegible] կըդիզեն ու

կը-

կըվառեն , և մինչև որ աս ածուխը մո-
խիր դառնայնէ՝ հանգը կըգլորվի օճա-
խին տակը ամանի մէջ . աս օճախներուն
փուքը Քէօրիւ-կը շինած էր տարբեր կեր-
պովմը , որ է երկու գլանաձև փայտ՝ ո-
րուն մէջին կողմէն փորած են ութը մատ-
նաչափ տրամագիծով . ասոնց մէջը խո-
թած էր մէյմէկ փայտեր լաթով պատած
ջրմուղի Նու-լու-ճպայէ կոթիպէս , երբոր
պէտք ըլլար բանեցընելունէ՝ աս փայ-
տերուն մէկը վեր կըհանեն մէկալը վար
կըհըրեն , և այսպէս կըբըչեն օճախը .
գէրէմ աս գլաններուն վերի կողմը քիչ-
մը լայն ըլլալով քան վարի կողմը , եր-
բոր վեր կըքաշեննէ օդ կըմըտնայ գլա-
նին մէջ , երբոր ուժով վար կըհըրեն-
նէ , վարի մասուրայէն կերթայ օճախին
մէջը : Ասկից գային տեսնալու մէկ
մագնիսի Տէմիր-թօզէ հանքմը՝ որուն մագ-
նիսը շատ ուժով էր Ժ գհասարակ մագ-
նիսը : Երբոր կըբանէին հասարակ եր-
կաթով ան հանգին մէջը , երկաթները
կըկըպչէին մագնիսին վրայ սաստիկ ու-
ժով . սաստիկ ջուր տըված երկաթնե-
րով ջանացին հանել մէկ քանի կըտոր-
մը , բայց անկարելի եղաւ . աս հանգին
մէկ քանի դուրս ցըցուած տեղերէն շատ
մեծ աշխատանքով բըրցուցին մէկ քա-

նի կտորներ . ատոնք այնչափ կարծր էին՝ որ վրան կըրնար ծեծվէր երկաթ մը խոշոր չէնքիճներով առանց տափկընալու . ատ հանգը թէ որ կարենայիր քիչմը տահա աւելի փորելնէ, աղնիվ մագնիսի կըտորվանք կելլայ մէջէն . ինչպէս որ մակաբերեցին Ինգլիթներընէ, աս մագնետին երկու բեւեռը կընայի հիւսիս ու հարաւ ։ Փուստուլայով չիկըրցան բորձել, վա՛ղն ալ երբոր փուստուլային կըմօտեցընէինանէ կըսկըսէր միակերպ պըտըրտիլ, որով չէր իմացվէր աղէկմը ։ Ինգլիթները այսպէս վեր 'ի վերոյ քննութի ընելէն ետքը դարձան, ինչու որ անտեղվանքը շատ չէին կըրնար ուշանալ, մէյմը որ բաւական կերակուր չունէին հետերնին, մէյմալ որ սաստիկ վախ կար մարդակեր գազաններէն ։

Ինչպէս որ Մաշարը կըպատմէնէ Սիամի թագաւորը ընկըսաւ քրիստոնէից վրայ աղէկ աչքով նայիլ . Իօսամանթին փոխարքային աղաչանքովը հըրամայեր էր որ Փորթուքէզցի Ինգլիթներուն ու Տօմինիկեան կրօնաւորներուն համար շինվի մասնաւոր տունմը ու ժամմը, աս պատճառիս հէմ Փռանսըզ Ինգլիթներնալ աղաչեցին՝ որ իրենց ալ հրաման տայ որ շինեն մէկ դըրա-

բա

բառունմը կըրԹելու համար Չինմա-ցիներուն տըղաքը. Թագաւորը բայց 'ի հրամանն տալէն որ շինվի երկու փառա-ւոր տեղ, երբեմն երբեմն անձամբ կեր-Թար՝ որ փուԹացընէ շինողները շուտ լըմընցնելու համար ։ Ա՛ս տեղերուն շին-ւածքը լըմըննալէն ետև՝ Թագաւորական հրովարտակներով յանձնըվեցաւ Ճիզ-վիԹներուն մշտնջենաւոր ժառանգու-Թե. և իրենց տըրվաւ նաև 100 հոգի՝ որ յորդւոց որդի միշտ ծառայէն անոնց ։ Ա՛ս Թագաւորին տըրված ԹըղԹերուն մէջ ամենևին չիգայ իրեն ստորագրու-Թիւը, այլ միայն կընքած է Թագաւորա-կան կնիքով Ջօհէ-բօղ, վասն զի Չինա-մի Թագաւորները չունէին սովորու-Թիւն ստորագրելու հիչ մէկ ԹուղԹի-մը հրովարտակի մը վրայ՝ ինչպէս որ կըս-տորագրեն Եւրոպայի Թագաւորները ։

**Ա՛ս հետևեալն է ան ԹըղԹին օրինակը՝ որ գրեց Թագաւորը Ճիզվիթներուն համար ։**

,, Մ՛ենք երբոր գայերէինք ՍօուլԹօ-Սօուան, Օխա-Վ իլԹքհաիկէնը. (որ է ԿոստանԹին փոխըրքային անունը Չինա-մացիներէն) խընդրեց մեզմէն խոնար-հուԹե՛՝ որ տըրվի Փռանսըզի ՃիզվիԹ-նե-

ներուն Սիամի Թագաւորութեան մէջ մէկ տունմը, դիտանոցմը, ու 100 ծառայ, անոր համար մենք ալ հրամայեցինք մեր Թագաւորական պաշտօնատէրներուն՝ որ ամենայն ուշադրութեամբ կատարուի մեր հրամանները, ինչպէս խնդրեց Օխա-Ն Իթքըհաիկէնը՝ Փռանսըզ Պ՛իվլիթներուն համար։ Կուզեմ որ ան 100 հոգին՝ որ տրվինք անոնց ծառայութիւնը, ըլլան ծառայօղ յորդւոց որդի և անոնց յաջորդները, և կարգելեմ որ հիչ մէկը կարօղ չըլլայ որ ան 100 հոգիին մէջէն կամ իրենց որդիքներէն՝ առնուն ուրիշ բանի ծառայեցընելու համար. ո՛վ որ աս մեր հրամանները չիպահենէ, մենք կըհրատարակենք զանիկայ անիծած աստուծմէ ու մեզմէ, և կըպատժենք զանի դատապարտելով դժոխքին մէջ, ուսկից որ ազատութեան յոյս չիկըրնար ունենալ հիչ մէկը՝ ո՛չ աստուծմէ ու ո՛չ մարդէ։ ”

„ Թագաւորին հրամանաւը կընքըվեցաւ աս Թուղթը ու գրվեցաւ Պ՛աքքօնի Թըղթի վրայ 25 տողով։ ”

Թագաւորը՝ աս Թուղթը ու ուրիշ Թուղթերը որ Եւրոպայ խրկեր պիտոր տըվաւ Կօստանթին փոխարքային որ երթայ կընքէ. Թաշառնալ հետը գընաց

տես-

տեսնալու համար թէ ինչ արարողութի-
ներով կընկընքեն։ Մտանք երկուքը մէ-
կէն գացին պալատին մէջ եղած մէկ
խաթմը ուրտեղ կըպահուէր Շահին
թագաւորութե̄ կընիքները. տահա՛ հոն-
տեղը չիհասած, երբոր կանցնէինկոր
թագաւորին նըստած խուցերուն պա-
տուհաններուն տակէն, լսեց Թաշաւը՝
որ ամէն կըռքատուններուն մէջ կեր-
գէյինկոր, որոց ամենուն ձայնը մէկ-
տեղ ժողված կըլլավէր թգ̃ւորին խու-
ցէն։ Թաշաւը հարցուց թէ ի՞նչ կընը-
շանակէ աս ձայները, անոնք ալ պատաս-
խան տըվին թէ թագաւորին քուրմեր-
նեն՝ որ իրենց սովորութե̄ը կէօրէ աղօթք
կընեն թագաւորին առողջութե̄ը հա-
մար, և թէ թագաւորը միշտ կըպահէ
զասոնք աս պաշտօնիս համար. անկից
քիչմը առաջ գացինէ, Թաշաւը լսեց
մէկ մարդու ձայն մը՝ որ կըկարդարկոր
թագաւորին խուցին մէջ, ասալ հար-
ցուցնէ պատասխան տըվին, թէ թա-
գաւորը ամէն օր քուն ըլլալէն առաջ
կարդալ կուտայ առջեւը իրեն թագաւո-
րութե̄ ու ուրիշ մօտիկ եղած տէրութի-
ներուն պատմութի̄ը՝ որ ժողված էր շատ
աշխատանքով ու մեծ խարճով։

Երբոր մըտան ան սըրահին մէջ ուր-
տեղ

տեղ կըպահվէր կընիքները , շուտ մը
իշխանին մէկը որուն յանձնըված էր ա-
նոնց պահպանութ̃իը , մեծ յարգութ̃ի
տալով ձեռք առաւ սա թագաւորական
կընիքներուն սընտուկը . անատենը մէ-
կէն նուագարաններով չալըղըներով խմա-
ցուցին մօտիկ եղօղներուն՝ որ վայելուչ
կերպովմը կենան . Հանեցին կընիքնե-
րուն սընտուկը ան սրահէն ու տարին
մէկ ուրիշ սրահմը յարգութ̃՝ իբրև մէկ
սըրբազան բանմը . նուագարանները
կեցան ան սըրահին դըռան առջևը միա-
կերպ չալելով ։ Երբոր Կօստանթին փո-
խարքան ներս մըտաւ սընտուկը տանօ-
ղին հետը , իշխանները՝ որ կըսպասէին-
կոր անտեղը , ամէնքը երեսի վըրայ ին-
կած յարգութ̃ի տըվին . անատենը փո-
խարքան գնաց մօտեցաւ գահին թախտէն
քովը՝ որուն վըրայ դըրեր էին սընտու-
կը , բացաւ ու հանեց կընիքները ու կըն-
քեց բոլոր թուղթերը . անատենը նուա-
գարանները սատկացուցին իրենց չա-
լելը , և նոյն կընիքները սընտուկով
նորէն տարին դըրին իրեն առջի տեղը ։
Ու ամէն յաջողութիւնները ու շնորհք-
ները՝ որ Կօստանթին փոխարքային ա-
տենը ունեցան Փռանսըզները Շ խանի
թագաւորութ̃ը մէջ , մէկ քանի տարի-
էն

էն եւս բոլորը ոչնչացաւ, վասն զի Թագաւորութեան մէջ եղաւ մէկ մեծ խռովութիւն մը ապստամբութեան, որուն մէջ սպաննեցին զԿօստանթին փոխարքան՝ ուրիշ Թագաւորական պաշտօնատէրներով։

## Մէկ քանի գիտնալու ծանօթութիւններ Ճիամայէներուն վրայ։

Թաշաուրին պատմածին կէօրէ, բոլոր Ճիամի Թագաւորութիւնը բաժնըւած էր 12 գաւառ՝ որոց վըրայ դըրւած էր մէյմէկ փոխարքայ՝ իբրեւ իշխաններ՝ որոնք կըկառավարէին Թագաւորին անունով։ Իրենց կրօնը կռապաշտութիւն էր, եւ շատ աւելորդապաշտ արարողութիւններ ու կարծիքներ ունէին. իրենց օրէնքը կարգելէ որ չխըմեն այնպիսի ըմպելիքներ՝ որ մարդը կըգինովցընեն, ու չտըկարացընեն իրենց ուժը շատ աշխատանքով. աս վերջի օրէնքը շատ ճըշտութեամբ կըպահեն, վասն զի իրենց կըլլիման չափազանց տաք ըլլալով աշխատութիւնը շատ կըտըկարացընէ մարդը, անոր համար աս օրէնքը իրենց բնական կըսեպեն։ Մէկը որչափ որ շատ փող ունենայնէ, այնչափ շատ պատիւ ու փառք կունենայ ժողովրդեան առջեւը։

Ճիա

Ռուսիի Թագաւորութեան մէջ շատ հանքեր կան ոսկիի, պղընձի, մագնիսի, երկաթի, կապարի, ու քալինի. աս հանքերով շատ վաստակ կընեն անտեղի բնակիչները։ Ինչ որ մեր կըլիմաներուն մէջ մեղի ծանօթ ծառեր ու բոյսեր կըգըտնըվին, անոնցմէ չիկայ ամէնևին ան տեղը. ո՛չ սոխ, ո՛չ սըխտոր, ո՛չ շաղգամ, ո՛չ մաղտանոս. ան տեղի վարդերը ամէնևին հոտ չունին. բայց ասոնց տեղը կայ հոն ալ ուրիշ ծառեր, բոյսեր, ծաղիկներ՝ որ մեր կըլիմաներուն տակը չիգըտնըվիր. ինչպէս Բօբօօ ըսված պըտուղը՝ որ կըրնանք ըսել թէ է մէկ տեսակ մը թուզի ենձէրէ. կայ մէկ ուրիշ ծառ մընալ՝ որ նմանապէս տեսակ մը թուզի կերևնայ, որուն ճիւղերը միշտ դէպ 'ի հողին վրայ կըծըռուին, ու երկըննալով կուգայ կըկըպչի գետնին վըրայ ու արմատ կըհանէ և անկից նոր ծառ կըձևանայ. թէ որ ասոնք մէկզմէկէ չիբաժնըվին՝ բոլոր գետնին վըրայ կըտարածվի ինքիրենը։ Կայ մէկ ուրիշ ծառ մընալ՝ որ կըսվի ծառ բոյներու եղաններու թռչնոց. ասոր հաստութիւնը ու բարձրութիւնը կըլլայ մեր խընծորներուն ծառերուն չափ, բայց ծառին բունը ու հաստը ճիւղերը լըցուն են փըշոտ ճիւղերով. Թռչուն-

նե-

ները՝ ասոր են բարակ ճիւղերուն ծայ-
րը կը շինեն իրենց բոյնը ։ Տէմֆեռ-
ճամբորդը աս ծառերուն մէկուն վրայ
համրեց 50 բոյնէն աւելի ։

Աս երկիրները այնչափ պարարտ են ,
որ երբոր աղէկ մշակուին, մէկին մինչև
200 կուտայ․ կայ տեղ տեղ արտորայ-
ներ՝ որ թէպէտ մշակած ու ցանուած չէ ,
բայց 'ի վերայ այսր ամի առատ բրինձ
կը ժողվեն անտեղերէն ։ Շատ տեսակ
ու առատ պտուղ կայ հոն․ կը գտնը-
վի մէկ քանի տեսակ պտուղներու՝ որ
թէպէտ և ուրիշ կլիմաներու ալ հա-
սարակ են , բայց աս տեղիններուն հա-
մը ու անոյշ հոտը շատ գերազանց են
քան մէկալ երկիրներունը․ կենդանեաց
համար բուսած խոտը շատ կոշտ է , ա-
նոր համար շատ ձի ու ջորի խաշներ չեն
պահեր․ իրենք երկու կենդանի միայն
կը գործածեն ոչ եզ ու փիղ ։ Ճամայիք
գրեթէ ամմէնքը զուտ ջուր կը խըմեն․
ջուրէն զատ ունին երկու տեսակ ըմպե-
լի ալ․ մէկը կըսվի Ռաքի մէկալնալ կը-
սվի Նէքէ․ երկուքնալ կը վայլեն զանազան
ծառերու ճեղքուածքներու մէջէն ։ Ա-
սոնք շատ խարճ չունին զգեստի , բնա-
կարանի ու խապլխաճախի․ միշտ կը քա-
լեն բոպիկ ոտքով ու բաց գլխով․ միշտ
մերկ

մերկ են, միայն մէկ կտոր գունաւոր լաթմը կախած են առջևնին. իրենց էն գեղեցիկ տուները փայտէ շինված են ու միշտ մէկ խաթ է. տէօշէկնին հասարակօրէն մէկ խըսիրմընէ. հաց ուտելու սեղաննին ցած գետնի վըրայ կըդընեն ու փէշկիր չունին ամենևին. կերակուր ուտելու համար չաթալ, դանակ, դըգալ չունին, այլ ամմէն բան ձեռքով կըլըմընցընեն. իրենց սէտիրները բոլոր խըսիրով շինած է, ամմէն ամանները հողէ ու կօշտ յաղձապակիէ ֆառֆոռէ շինած է. անոնց սովորական կերակուրը է բրինձ, ձուկ, մարախ չէքէրչէ, մուղըս ջէվըզնէքէլէ ու ուրիշ այսպիսի միջատներ՝ որ իրենք ամենևին չեն քանիր ուտելու։

Ասոնք շատ արարողութիւն չունին պըսակի, ու անտեղի տաքին պատճառաւը սովորութիւն ունին որ շուտ կըկարգեն թէ՛ մանչերը թէ աղջիկները. այնպէս որ աղջիկները հասարակօրէն տասվերկու տարեկան տըղայ կունենան։ Ինչպէս որ վերը պատմեցինք՝ թագաւորը շատ փիղեր կըպահէ, և անոնց հոգացողները աղէկ սընուցանելու պատրուակաւ՝ կըտաննին կըխօթեն ժողովըրդեան այգիներուն ու պարտէզներուն, մէջ՝ որ բո-

բոլորովին կրբրձայրնեն մէջէն եղած բաները․ հիչ մէկը չիկրնար քօյել իրեն պարտէզին կից այգիին դուռը Թագաւորին փիղերուն դէմ․ ան ամէն փիղերը մեծ մեծ պատուոյ անուններ ունին ։ Թագաւորուե յաջորդուինը հասարակօրէն յորդւոց որդի է , բայց շատ քիչ անգամ կըլլայ որ Թագաւորին ժառանգ որդին նըստի աթոռը , վասն զի ապըստամբըմը կելլայ ու կըտիրապետէ Թագաւորութե ։ Աս ժողովուրդները ուսման ու գիտութե կողմանէ հիչ մէկ գովելու տեղմը չունին , վա զի տըգիտութե մէջ ծըներ են , ու տըգիտութե մէջ մեծցերեն բարբարոսիմըպս․ և աս պէտք էր որ այսպէս ըլլար , ինչու որ՝ մէկ ազգմը երբոր գիտութիւը սիրեր է ու ետևէն ինկերէնէ , ան ազգը կըտեսնանք որ բարբարոսութենն խալըսեր է ու ազնուականութե ամմենուն սիրելի եղեր է․ իսկ ան կոպիտ ազգերը՝ որ ուսման անունը պիլէ չեն ուզած լըսել, մինչև ասօր իրենց թշուառ ու ողորմելի վիճակին մէջը մընացերեն , ու հիչ մէկը երեսնին չէ նայած , ու ամմէնուն քամահրելի եղեր են այնպիսիները , որ աշխարհքիս մէջ քան զան մեծ ամօթ չիկայ ։

Աբկ
Գկ 1